



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 306-Ա

«4» մարտի 2026 թ.

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի N 642-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

- Կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի ապրիլի 26-ի «Նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրման թեստավորման փուլի հարցաշարը հաստատելու մասին» N 642-Ա հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
- Կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարի մամուլի քարտուղար Նելլի Վահանյանին՝ հաստատված նոր խմբագրությամբ հարցաշարը հրապարակել նախարարության պաշտոնական կայքէջում:

X

ՆԱԽԱՐԱՐ՝

Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
/պարտականությունները կատարող/

«Հավելված
Կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարի 2026 թվականի
մարտի 4-ի N 306-Ա հրամանի

«Հավելված
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարի 2022 թվականի ապրիլի
26-ի N 642-Ա հրամանի

ՀԱՐՑԱՇԱՐ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼԻ

Հարց 1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են՝

- **Սահմանադրությամբ կամ օրենքներով:**

ՀՀ Սահմանադրություն, հոդված 6, մաս 1

Հարց 2. Ո՞ր օրենքն ունի հետադարձ ուժ:

- **Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքը;**

ՀՀ Սահմանադրություն, հոդված 72

Հարց 3. Ո՞ր օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

- **Անձի իրավական վիճակը վատթարացնող:**

ՀՀ Սահմանադրություն, հոդված 73, մաս 1

Հարց 4. Տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու իրավունք ունի՝

- **Յուրաքանչյուր ոք՝ առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով:**

ՀՀ Սահմանադրություն, հոդված 42, մաս 1

Հարց 5. Նշվածներից ո՞ր դեպքում է հանցագործության համար մեղադրվողը համարվում անմեղ:

- **Քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:**

Հարց 6. Հայաստանի Հանրապետությունում գործում են՝

- Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը: Օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 163, մաս 1

Հարց 7. Մտավոր սեփականությունը պաշտպանվում է՝

- Օրենքով:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 60, մաս 7

Հարց 8. Նշվածներից ո՞ր մարմիններն են ՀՀ-ում իրականացնում արդարադատություն:

- Միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 162, մաս 1

Հարց 9. Նշվածներից ո՞ր իրավական ակտով է սահմանվում ՀՀ քաղաքացիության ձեռքբերման և դադարեցման կարգը՝

- Օրենքով:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 47, մաս 6

Հարց 10. Ո՞վ է ստորագրում կառավարության որոշումները՝

- ՀՀ Վարչապետը:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 153, մաս 2

Հարց 11. Նշվածներից ո՞ր դատարանն է օրենքով նախատեսված դեպքերում որոշում կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու վերաբերյալ:

- Սահմանադրական դատարանը:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 168, կետ 12

Հարց 12. Ո՞վ է նշանակում և ազատում մարզպետներին՝

- ՀՀ կառավարությունը:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 160, մաս 2

Հարց 13. Ո՞ր ունի կրթության իրավունք՝

- **Յուրաքանչյուր ոք:**

ՀՀ Սահմանադրություն, հոդված 38, մաս 1

Հարց 14. Ո՞ր իրավական ակտով են սահմանվում պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը:

- **Օրենքով:**

ՀՀ Սահմանադրություն, հոդված 38, մաս 1

Հարց 15. Ո՞ր կրթությունն է անվճար պետական ուսումնական հաստատություններում:

- **Միջնակարգ:**

ՀՀ Սահմանադրություն, հոդված 38, մաս 1

Հարց 16. Ո՞ր տարիքի երեխաներին է արգելվում ընդունել մշտական աշխատանքի:

- **Մինչև 16 տարեկան:**

ՀՀ Սահմանադրություն, հոդված 57, մաս 4

Հարց 17. Նշվածներից ո՞ր իրավական ակտով է սահմանվում համայնքի բյուջեի եկամուտների ձևավորման և ծախսերի իրականացման կարգը:

- **Օրենքով:**

ՀՀ Սահմանադրություն, հոդված 185, մաս 2

Հարց 18. Որո՞նք են ՀՀ վարչատարածքային միավորները:

- **Մարզերը և համայնքները:**

ՀՀ Սահմանադրություն, հոդված 121

Հարց 19. Ովքե՞ր չեն կարող ընտրել, ընտրվել և մասնակցել հանրաքվեին:

- **Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:**

ՀՀ Սահմանադրություն, հոդված 48, մաս 4

Հարց 20. Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքն ու՛մ է պատկանում:

- **Պատգամավորներին, Ազգային ժողովի խմբակցություններին և Կառավարությանը:**

ՀՀ Սահմանադրություն, հոդված 109, մաս 1

Հարց 21. Ո՞ր պաշտոնատար անձանցից է կազմված ՀՀ կառավարությունը:

- **Վարչապետից, փոխվարչապետներից և նախարարներից:**

ՀՀ Սահմանադրություն, հոդված 147 մաս 1

Հարց 22. Ո՞վ է տնօրինում համայնքի սեփականությունը և ինչպե՞ս:

- **Համայնքի ավագանին՝ օրենքով սահմանված կարգով:**

ՀՀ Սահմանադրություն, հոդված 184, մաս 3

Հարց 23. Ո՞վ է նշանակում հանրաքվեն:

- **ՀՀ նախագահը:**

ՀՀ Սահմանադրություն, հոդված 206

Հարց 24. Նշվածներից որ բնագավառներն են գտնվում պետության հոգաժողության և պաշտպանության ներքո:

- **Հայոց լեզուն և մշակութային ժառանգությունը:**

ՀՀ Սահմանադրություն, հոդված 15, մաս 2

Հարց 25. Հայաստանի Հանրապետության զինանշանն է՝

- **Կենտրոնում՝ վահանի վրա, պատկերված են Արարատ լեռը՝ Նոյյան տապանով, և պատմական Հայաստանի չորս թագավորությունների զինանշանները: Վահանը պահում են արծիվը և առյուծը, իսկ վահանից ներքև պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա և ժապավեն:**

ՀՀ Սահմանադրություն, հոդված 21, մաս 2

Հարց 26. Հայաստանի Հանրապետության խորհրդանիշերն են՝

- **ՀՀ դրոշը, ՀՀ զինանշանը, ՀՀ օրհներգը:**

ՀՀ Սահմանադրություն, հոդված 21

Հարց 27. Հայաստանի Հանրապետության զինված ուժերն ապահովում են՝

- Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 14, մաս 1

Հարց 28. Ու՛մ կողմից է ընտրվում ՀՀ Նախագահը, ի՞նչ ժամկետով:

- Հանրապետության Նախագահն ընտրվում է Ազգային ժողովի կողմից՝ յոթ տարի ժամկետով:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 124 , մաս 1 և հոդված 125, մաս 1

Հարց 29. Ու՛մ առաջարկությամբ և ո՞վ է Կառավարության կազմում կատարում փոփոխություններ:

- Հանրապետության նախագահը, վարչապետի առաջարկությամբ, փոփոխություններ է կատարում Կառավարության կազմում:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 131

Հարց 30. Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են՝

- Սեփականության բոլոր ձևերը:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 10, մաս 1

Հարց 31. Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան օրենքով սահմանված կարգով և ո՞ր դեպքում՝

- Անչափահասին դաստիարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու մարմին ներկայացնելու նպատակով:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 27, մաս 1 կետ 5

Հարց 32. Անձնական տվյալներին ծանոթանալու իրավունքը կարո՞ղ է սահմանափակվել:

- Կարող է՝ միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Հարց 33. Ո՞ր պատիժներն են արգելվում:

- **Մարմնական:**

ՀՀ Սահմանադրություն, հոդված 26, մաս 2

Հարց 34. Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների՝

- **Դաստիարակության, կրթության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման մասին:**

ՀՀ Սահմանադրություն, հոդված 36, մաս 1

Հարց 35. Մարդու իրավունքների պաշտպան կարող է ընտրվել՝

- **Բարձրագույն կրթություն ունեցող, պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող, հասարակության մեջ բարձր հեղինակություն վայելող յուրաքանչյուր ոք:**

ՀՀ Սահմանադրություն, հոդված 192, մաս 2

Հարց 36. Ինչպե՞ս է իրականացվում կրթական ծրագրերի և նախադպրոցական ծառայությունների լիցենզավորումը:

- **Օրենքով և ՀՀ կառավարության սահմանած կարգով:**

«Կրթության մասին» օրենք, հոդված 41, մաս 1

Հարց 37. Ինչերը՞ կարող են իրականացվել միայն լիցենզիայի առկայության դեպքում:

- **Օրենքով նախատեսված կրթական ծրագրերը և նախադպրոցական ծառայությունը:**

«Կրթության մասին» օրենք, հոդված 41, մաս 1

Հարց 38. Ու՞մ և ինչպե՞ս է պետությունը ապահովում տարրական ընդհանուր կրթական ծրագրով նախատեսված դասագրքերով:

- **Տարրական հանրակրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների առաջինից չորրորդ դասարանների սովորողներին պետական բյուջեի միջոցների հաշվին՝ անվճար:**

«Կրթության մասին» օրենք, հոդված 6, մաս 4

Հարց 39. Ո՞ր մարմինը կարող է հիմնադրել ռազմական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ:

- **ՀՀ կառավարությունը:**

«Կրթության մասին» օրենք, հոդված 29, մաս 4

Հարց 40. Հանրակրթության բնագավառում նշվածներից ո՞րն է մարզպետի իրավասություններից:

- **Պետական ուսումնական հաստատություններին օգտագործման իրավունքով հանձնված շենքերի կառուցման, շահագործման և պահպանման ապահովումը:**

«Կրթության մասին» օրենք, հոդված 38, կետ 4

Հարց 41. Նշվածներից ո՞րն է հանրակրթության բնագավառում համայնքի ղեկավարի իրավասություններից:

- **Ուսումնական հաստատությունների ինքնակառավարման սկզբունքին համապատասխան՝ աջակցել համայնքի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացմանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանած կարգով:**

«Կրթության մասին» օրենք, հոդված 39, կետ 1

Հարց 42. Կրթության բովանդակությունն ապահովում է՝

- **Սովորողների աշխարհաճանաչման ձևավորումը գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին (աստիճանին) համապատասխան:**

«Կրթության մասին» օրենք, հոդված 11, մաս 2, կետ 1

Հարց 43. Կրթության բովանդակությունն ապահովում է՝

- **Սովորողների կողմից ազգային և համամարդկային մշակութային արժեքների յուրացումը:**

«Կրթության մասին» օրենք, հոդված 11, մաս 2, կետ 2

Հարց 44. Կրթության բովանդակությունն ապահովում է՝

- **Հասարակության կատարելագործումը և ազգի զարգացման նոր մակարդակ ապահովող ժամանակակից անհատի ու քաղաքացու ձևավորումը:**

«Կրթության մասին» օրենք, հոդված 11, մաս 2, կետ 3

Հարց 45. Կրթության բովանդակությունն ապահովում է՝

- **Հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրությունն ու զարգացումը:**

«Կրթության մասին» օրենք, հոդված 11, մաս 2, կետ 4

Հարց 46. Նախադպրոցական կրթության ծրագրերի իրականացման գործում գլխավոր դերը ում է պատկանում

- **Ընտանիքին:**

«Կրթության մասին» օրենք, հոդված 17, մաս 2

Հարց 47. Ուսումնական հաստատությունը Ե՞րբ է համարվում ստեղծված:

- **Հիմնադրի (հիմնադիրների) կողմից հաստատության կանոնադրությունը հաստատելու և օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալու պահից:**

«Կրթության մասին» օրենք, հոդված 30, մաս 2

Հարց 48. Ինչպե՞ս է վերակազմակերպվում ուսումնական հաստատությունը:

- **Միաձուլման, միացման, բաժանման, առանձնացման և վերակազմավորման ձևերով:**

«Կրթության մասին» օրենք, հոդված 33, մաս 2

Հարց 49. Ե՞րբ է ուսումնական հաստատության լուծարումը համարվում ավարտված, իսկ դրա գոյությունը՝ դադարեցված:

- **Իրավաբանական անձանց պետական գրանցման մատյանում այդ մասին գրառում կատարելու պահից:**

«Կրթության մասին» օրենք, հոդված 35, մաս 4

Հարց 50. Նշվածներից ո՞րն է կրթության բնագավառում՝ ՀՀ կառավարության իրավասություններից:

- **Պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունների հաստատումը:**

«Կրթության մասին» օրենք, հոդված 36, կետ 5

Հարց 51. Նշվածներից ո՞ր մարմինն է ապահովում կրթական քաղաքականության իրականացումը:

- **Հայաստանի Հանրապետության կառավարությունը:**

«Կրթության մասին» օրենք, հոդված 36, կետ 1

Հարց 52. Նշվածներից ո՞ր մարմինն է մշակում ՀՀ կրթության զարգացման պետական ծրագիրը, պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգը:

- **Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:**

Հարց 53. Նշվածներից ո՞ր մարմինն է ապահովում օրինակելի հանրակրթական ծրագրերի, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, դասագրքերի և ուսումնական ձեռնարկների մշակումն ու հրատարակումը:

- **Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:**

«Կրթության մասին» օրենք, հոդված 37, կետ 3

Հարց 54. Նշվածներից ո՞ր մարմինն է մշակում պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունները:

- **Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:**

«Կրթության մասին» օրենք, հոդված 37, կետ 5

Հարց 55. Նշվածներից ո՞ր մարմինն է համաձայնություն տալիս պետական համապատասխան լիազորված մարմնի կողմից ուսումնական հաստատությունների վերակազմակերպման և լուծարման վերաբերյալ:

- **Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:**

«Կրթության մասին» օրենք, հոդված 37, կետ 15.1

Հարց 56. Նշվածներից ո՞ր մարմինն (կամ ղեկավարն) է համակարգում և վերահսկում դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը և ապահովում նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություններում:

- **Մարզպետը:**

«Կրթության մասին» օրենք, հոդված 38, մաս 3

Հարց 57. Ի՞նչ վճարովի այլ աշխատանք կարող է միաժամանակ կատարել պետական ուսումնական հաստատության տնօրենը:

- **Գիտամանկավաժական և ստեղծագործական:**

«Կրթության մասին» օրենք, հոդված 40, մաս 5, 2-րդ պարբ.

Հարց 58. Կառավարման ո՞ր մարմինն է հավելյալ վարձատրություն սահմանում սահմանամերձ, բարձրլեռնային և լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար:

- **ՀՀ կառավարությունը:**

Հարց 59. Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը՝

- Կրթության զարգացման պետական ծրագիրն է:

«Կրթության մասին» օրենք, հոդված 4, մաս 4

Հարց 60. Ո՞ր մարմինը և ո՞ւմ ներկայացմամբ է հաստատում կրթության զարգացման պետական ծրագիրը:

- Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացմամբ՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը:

«Կրթության մասին» օրենք, հոդված 4, մաս 4

Հարց 61. Ինչպե՞ս է սահմանվում «կրթություն» հասկացությունը:

- Անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու ու սերունդներին փոխանցելու համար:

«Կրթության մասին» օրենք, հոդված 3, կետ 1

Հարց 62. Ինչպե՞ս է սահմանվում «ուսումնական հաստատություն» հասկացությունը:

- Իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որն իրականացնում է մեկ կամ մի քանի կրթական ծրագիր և ապահովում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունն այդ ծրագրերի պահանջներին համապատասխան:

«Կրթության մասին» օրենք, հոդված 3, կետ 4

Հարց 63. Ո՞ր ուսումնական հաստատությունն է կոչվում կրթահամալիր:

- Տարբեր կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների միավորումը:

«Կրթության մասին» օրենք, հոդված 3, կետ 8

Հարց 64. Ուսումնական հաստատություններում ուսումնական տարվա սկիզբը և տևողությունը սահմանվում է՝

- Պետական կրթական չափորոշիչով:

Հարց 65. Նշվածներից ո՞վքեր կարող են լինել ոչ պետական ուսումնական հաստատության հիմնադիր:

- **Ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք:**

«Կրթության մասին» օրենք, հոդված 29, մաս 3

Հարց 66. Ի՞նչ նորմատիվ ակտով են սահմանվում ուսումնական հաստատությունների կառավարման մարմինները, դրանց ձևավորման կարգը և լիազորությունները:

- **Ուսումնական հաստատության կանոնադրությամբ:**

«Կրթության մասին» օրենք, հոդված 40, մաս 4

Հարց 67. Ո՞ր դեպքում կարող են իրականացվել օրենքով նախատեսված կրթական ծրագրեր:

- **Միայն լիցենզիայի առկայության դեպքում:**

«Կրթության մասին» օրենք, հոդված 41, մաս 1

Հարց 68. Ու՞մ է ուսումնական հաստատությունը հանձնում համապատասխան փաստաթուղթ (վկայական, ատեստատ, դիպլոմ):

- **Կրթական ծրագրերով ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորում անցած անձանց:**

«Կրթության մասին» օրենք, հոդված 44, մաս 1

Հարց 69. Կրթական ծրագրերի ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման, գրանցման, պահպանման, կրկնօրինակի տրամադրման կարգը, այդ թվում՝ զինվորական կրթության փաստաթղթերի առանձնահատկությունները, ինչպես նաև ակադեմիական տեղեկանքի ձևը ո՞ր մարմինն է սահմանում:

- **Կրթության պետական կառավարման լիազոր մարմինը:**

«Կրթության մասին» օրենք, հոդված 44, մաս 3

Հարց 70. Ի՞նչ նպատակներով կարող է օգտագործվել պետական ուսումնական հաստատությունների գույքն՝ օտարվելու դեպքում:

- **Պետական ուսումնական հաստատությունների գույքն օտարվելու դեպքում կարող է օգտագործվել միայն ուսումնական նպատակներով:**

«Կրթության մասին» օրենքի հոդված 45, մաս 4

Հարց 71. Ինչպե՞ս է սահմանվում «հանրակրթական պետական չափորոշիչ» հասկացությունը:

- Նորմատիվ փաստաթուղթ, որը, ըստ կրթական ծրագրի աստիճանների, սահմանում է սովորողների ուսումնական բեռնվածության նվազագույն և առավելագույն ծավալը, սովորողների գնահատման համակարգի սկզբունքները, ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները և հանրակրթական միջնակարգ կրթության ծրագրի շրջանավարտին ներկայացվող որակական պահանջները՝ կարողունակությունները (կոմպետենցիաները):

«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1, կետ 5

Հարց 72. Ինչպե՞ս է սահմանվում «հանրակրթական ծրագիր (հիմնական և լրացուցիչ)» հասկացությունը:

- Առարկայական ծրագրերի, ուսումնական պլանների և ուսուցման կազմակերպման ձևերի ամբողջություն, որոնք ապահովում են հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված վերջնարդյունքներն ու կարողունակությունները:

«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1, կետ 6

Հարց 73. Ինչպե՞ս է սահմանվում «հանրակրթական դպրոց» հասկացությունը:

- Մեկ կամ մի քանի ընդհանուր, այդ թվում՝ հոսքային կամ առանձին առարկաների խորացված ուսուցմամբ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության տեսակ:

«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1, կետ 8

Հարց 74. Ո՞րն է տարրական կրթությունը:

- Պարտադիր կրթության առաջին մակարդակ, որը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի առաջին աստիճանը:

«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1, կետ 2

Հարց 75. Ո՞րն է հիմնական կրթությունը:

- Պարտադիր կրթության երկրորդ մակարդակ, որը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի առաջին և երկրորդ աստիճանները:

«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1, կետ 3

Հարց 76. Ո՞րն է միջնակարգ կրթությունը:

- **Հանրակրթության երրորդ մակարդակ, որը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի երեք աստիճանները:**

«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1, կետ 4

Հարց 77. Ո՞ր երեխաներն են ընդունվում ուսումնական հաստատության առաջին դասարան:

- **Ուսումնական հաստատության առաջին դասարան ընդունվում են այն երեխաները, որոնց վեց տարին լրացել կամ լրանում է տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ:**

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 16, մաս 2

Հարց 78. Ինչպե՞ս է կազմակերպվում սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթությունը:

- **Սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:**

«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 16, մաս 7

Հարց 79. Ո՞րն է հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը:

- **Կրթության զարգացման պետական ծրագիրը:**

«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 4, մաս 7

Հարց 80. Նշվածներից ո՞ր մարմինն է մշակում և հաստատում նախադպրոցական կրթական ծրագրերը:

- **Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք, հոդված 24, մաս 1, կետ 4

Հարց 81. Նշվածներից ո՞ր մարմինն է հաստատում նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունը:

- **ՀՀ կառավարությունը:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք, հոդված 23, մաս 1, կետ 2

Հարց 82. Ո՞վ է իրականացնում նախադպրոցական ուսումնական հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը:

- **Ուսումնական հաստատության գործադիր մարմինը՝ տնօրենը:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք, հոդված 19, մաս 1

Հարց 83. Ինչպե՞ս է սահմանվում «նախադպրոցական կրթություն» հասկացությունը:

- **Նախադպրոցական տարիքի յուրաքանչյուր երեխայի մտավոր, ֆիզիկական, հոգեկան և սոցիալական զարգացման, դաստիարակության, ուսուցման և խնամքի գործընթաց, որը համարվում է հանրակրթության սկզբնական աստիճան և իրականացվում է նախադպրոցական կրթության ծրագրով:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք,
հոդված 3, մաս 1,

Հարց 84. Ո՞ր տարիքի երեխաներն են ընդգրկվում նախադպրոցական ուսումնական հաստատություն:

- **Որոնց նախադպրոցական տարիքը լրացել կամ լրանում է տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք, հոդված 6, մաս 1

Հարց 85. Նախադպրոցական ուսումնական հաստատությունում երեխաների տարիքային հենքի հիման վրա ձևավորվող ավագ խմբում ընդգրկվում են՝

- **5-ից մինչև 6 տարեկան հասակը:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք, հոդված 6, մաս 2, կետ 6

Հարց 86. Ինչպիսի՞ կարգավիճակ ունեն պետական և համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունները:

- **Պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունները ոչ առևտրային կազմակերպություններ են:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք, հոդված 21, մաս 2

Հարց 87. Ինչպիսի՞ կարգավիճակ ունեն ոչ պետական նախադպրոցական ուսումնական հաստատությունները:

- **Ոչ պետական նախադպրոցական ուսումնական հաստատությունները կարող են ունենալ օրենքով նախատեսված ցանկացած կազմակերպական-իրավական ձև:**

Հարց 88. Ո՞րն է նախադպրոցական ուսումնական հաստատության հիմնադիր փաստաթուղթը:

- **Կառավարության հաստատած օրինակելի կանոնադրության հիման վրա հիմնադրի (հիմնադիրների) հաստատած կանոնադրությունն է:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք, հոդված 21, մաս 4

Հարց 89. Ո՞վ կարող է դիմել նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին:

- **Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենի թափուր տեղի համար կարող է դիմել, իսկ ընտրվելու դեպքում հայտարարված մրցույթին մասնակցել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստացած անձը:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք, հոդված 19, մաս 2

Հարց 90. Նշվածներից ո՞ր մարմինն է սահմանում նախադպրոցական ուսումնական հաստատության աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկությունները:

- **ՀՀ կառավարությունը:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք, հոդված 18, մաս 2

Հարց 91. Նշվածներից ո՞ր մարմինն է մշակում և հաստատում նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենների ղեկավարման իրավունքի (հավաստագրման) տրամադրման կարգը:

- **Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք, հոդված 24, մաս 1, կետ 7

Հարց 92. Նշվածներից ո՞ր մարմինն է սահմանում նախադպրոցական ուսումնական հաստատություններ սաների ընդունելության կարգը:

- **Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք, հոդված 24, մաս 1, կետ 11

Հարց 93. Նշվածներից ո՞ր մարմինն է հաստատում նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը:

- **ՀՀ կառավարությունը:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք, հոդված 23, մաս 1, կետ 3

Հարց 94. Նշվածներից ո՞ր մարմինն է մշակում և հաստատում նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության (նշանակման) կարգը :

- **Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք, հոդված 24, մաս 1, կետ 5

Հարց 95. Նշվածներից ո՞ր մարմինն է հաստատում նախադպրոցական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշներն ու իրականացման կարգը:

- **ՀՀ կառավարությունը:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք, հոդված 23, մաս 1, կետ 6

Հարց 96. Ինչպե՞ս է սահմանվում «մանկավարժական աշխատող» հասկացությունը:

- **Երեխաների կողմից նախադպրոցական կրթական (այդ թվում՝ լրացուցիչ) ծրագրերի յուրացման, նախադպրոցական կրթության չափորոշիչների պահանջների ապահովման, ինչպես նաև զարգացման, ուսուցման և դաստիարակության մեթոդների կիրառման միջոցով երեխաների համապատասխան գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռքբերմանը, արժեքային համակարգի ձևավորմանը նպաստող և երեխայի զարգացումն ու խնամքն ապահովող նախադպրոցական ուսումնական հաստատության աշխատակից:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1, կետ 23

Հարց 97. Նախադպրոցական կրթական ծրագրերի ապահովման միջոցառումներում և ծառայություններում որպես անբաժանելի մաս կարող են ներառվել՝

- **Երեխաների տրանսպորտային կազմակերպված փոխադրումները:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք, հոդված 11, մաս 4, կետ 5

Հարց 98. Նախադպրոցական ուսումնական հաստատության ֆինանսավորման աղբյուրներն են՝

- **Ծնողների (երեխայի օրինական ներկայացուցիչների) վճարումները, ֆիզիկական և իրավաբանական անձանց ներդրումները, հանգանակությունները և նվիրատվությունները:**

Հարց 99. Ինչպե՞ս է սահմանվում «նախադպրոցական ուսումնական հաստատության տարատարիք երեխաների խումբ» հասկացությունը:

- **Նախադպրոցական տարբեր տարիքի երեխաների համակազմով ձևավորված խումբ, որտեղ իրականացվում են տարիքային տարբեր խմբերի կրթական և զարգացման ծրագրեր:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1, կետ 13

Հարց 100. Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողն իրավունք ունի՝

- **Ուսումնադաստիարակչական աշխատանքներն իրականացնելու համար կիրառելու տարբերակային ձևեր՝ պահպանելով պլանավորմանը ներկայացվող սկզբունքներն ու չափանիշները:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք, հոդված 17, մաս 2, կետ 7

Հարց 101. Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողը իրավունք ունի՝

- **Մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը՝ օրենսդրությամբ և նախադպրոցական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք, հոդված 17, մաս 2, կետ 1

Հարց 102. Ինչպե՞ս է սահմանվում «մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ» հասկացությունը:

- **Ուսումնամեթոդական, հոգեբանական և մանկավարժական աջակցություն, որը ցուցաբերվում է երեխային, նրա ծնողին կամ օրինական ներկայացուցչին և մանկավարժական աշխատողներին:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1, կետ 18

Հարց 103. Ինչպե՞ս է սահմանվում «նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ» հասկացությունը:

- **Հանրակրթության պետական կրթական չափորոշիչի բաղկացուցիչ մաս կազմող նորմատիվ իրավական ակտ, որը բխում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից, սահմանում է նախադպրոցական տարիքի երեխաների (ըստ տարիքային**

խմբերի) զարգացման կրթական ծրագրերի բովանդակությունը, ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը (զարգացման ոլորտներով պայմանավորված վերջնարդյունքները), նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և զարգացման վերջնարդյունքների ապահովման հիմքերը:

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1, կետ 2

Հարց 104. Ինչպե՞ս է սահմանվում «նախադպրոցական կրթական (հիմնական) ծրագիր» հասկացությունը:

- **Նախադպրոցական կրթության նպատակների իրականացմանն ուղղված, տարիքային առանձնահատկություններին համապատասխան՝ ուսումնադաստիարակչական գործընթացի բովանդակության, կրթության կազմակերպման ձևերի, կիրառվող մեթոդաբանության, տեխնոլոգիաների ամբողջություն, որն ապահովում է նախադպրոցական կրթության պետական չափորոշչով սահմանված վերջնարդյունքները:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1, կետ 3

Հարց 105. Ինչպե՞ս է սահմանվում «կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա» հասկացությունը:

- **Խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտուալ (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության և այլ խնդիրներով պայմանավորված՝ ուսումնադաստիարակչական գործընթացի հետ կապված դժվարություններ ունեցող, ինչպես նաև բացառիկ ընդունակություններ ունեցող (օժտված) սան, որին նախադպրոցական կրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ, ներառյալ՝ խելամիտ հարմարեցումներ.**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1, կետ 17

Հարց 106. Նախադպրոցական ուսումնական հաստատություն ընդունվելու առաջնահերթության իրավունքից, ըստ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի, օգտվում են՝

- **Տվյալ ուսումնական հաստատությունում (կազմակերպությունում) ընդգրկված քույր, եղբայր ունեցող երեխաները:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք, հոդված 7, մաս 6, կետ 7

Հարց 107. Ե՞րբ է սկսվում և ավարտվում ուսումնական տարին:

- **Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից և ավարտվում՝ օգոստոսի 31-ին:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք, հոդված 7, մաս 4

Հարց 108. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը ներառում է՝

- **Նախադպրոցական կրթական ծրագրերի բովանդակությունը. ուսումնադաստիարակչական հիմնական ուղղությունները և, դրանցով պայմանավորված, կրթական ծրագրի բաղադրիչները.**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք, հոդված 10, մաս 1, կետ 3

Հարց 109. Ինչպե՞ս է սահմանվում «անհատական ուսուցման և զարգացման պլան» հասկացությունը:

- **Երեխայի կարիքի և առանձնահատկությունների հիման վրա կազմված փաստաթուղթ, որը սահմանում է երեխայի զարգացման, ուսուցման և դաստիարակության տարեկան նպատակները, խնդիրները և դրանց հասնելու գործողությունները (կարիքի դեպքում՝ նաև աջակցող ծառայությունները) և ժամկետները՝ երեխայի համար հասանելի դարձնելու համար նախադպրոցական կրթության պետական չափորոշիչի և կրթական ծրագրերի սահմանված վերջնարդյունքները:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք,
հոդված 3, մաս 1, կետ 20

Հարց 110. Նախադպրոցական կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներից է՝

- **Ուսուցման և խնամքի հավասար հնարավորությունները, մատչելիությունը, հասանելիությունը, ներառականությունը և համապատասխանությունը երեխայի զարգացման տարիքային և անհատական առանձնահատկություններին:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք,
հոդված 4, մաս 7, կետ 1

Հարց 111. Ինչի՞ն է նպատակաուղղված նախադպրոցական կրթությունը:

- **Յուրաքանչյուր երեխայի մտավոր, ֆիզիկական, հոգեկան և սոցիալ-անձնային զարգացմանը:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք,
հոդված 5, մաս 1, կետ 1

Հարց 112. Ո՞րն է նախադպրոցական կրթության խնդիրներից:

- **Նախադպրոցական կրթության հանրային նշանակության բարձրացումն ու որակի բարելավումը կրթական ծրագրերի բովանդակության վերանայման և ժամանակակից կրթական նորարարությունների ներդրման, միջազգային չափանիշներին համապատասխանեցման միջոցով:**

Հարց 113. Ազգային փոքրամասնությանը պատկանող երեխայի ընդունելությունը հաստատություն կարող է կատարվել՝

- Երեխայի մայրենի լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող հաստատությունում, իսկ դրա բացակայության դեպքում ուսուցման լեզվի ընտրությունը կարող է կատարել ծնողը (երեխայի օրինական ներկայացուցիչը):

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք,
հոդված 7, մաս 2

Հարց 114. Որո՞նք են նախադպրոցական կրթական ծրագրերի բաղադրիչները:

- Երեխայի ճանաչողության զարգացումը, փորձարարության և հնարամտության խթանումը, ինքնուրույն գործունեության, այդ թվում՝ ուսումնական և ստեղծագործական, խրախուսումը:

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք,
Հոդված 11, մաս 2, կետ 3

Հարց 115. Որո՞նք են նախադպրոցական կրթական ծրագրերի բաղադրիչները:

- Երեխայի խոսքի և հաղորդակցման, լեզվամտածողության, տրամաբանության զարգացումը, գրաճանաչության նախապատրաստումը:

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք,
Հոդված 11, մաս 2, կետ 2

Հարց 116. Ո՞ր մարմինն է իրականացնում նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչի ծրագրամեթոդական ապահովումը:

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք,
Հոդված 10, մաս 4

Հարց 117. Ինչպե՞ս է սահմանվում բացառիկ ընդունակություններ ունեցող (օժտված) սան հասկացությունը:

- Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա, որի ինտելեկտուալ, ստեղծագործական, սոցիալական և ֆիզիկական ներուժը կամ

դրանցից մի քանիսը ակնհայտորեն միջինից բարձր են, որի հետևանքով երեխան իր ներուժը լիարժեք զարգացնելու համար անհրաժեշտ խելամիտ հարմարեցումների (ծառայությունների, գործողությունների, միջոցների) կարիք ունի:

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք,
Հոդված 3, մաս 1, կետ 17.2

Հարց 118. Ինչի՞ հիման վրա է իրականացվում երեխայի ընդունելությունը նախադպրոցական ուսումնական հաստատություն:

- **Ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) դիմումի, հաստատության ու ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքված պայմանագրի հիման վրա:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք,
Հոդված 7, մաս 1

Հարց 119. Ո՞ր մարմինն է նախադպրոցական ուսումնական հաստատությունում իրականացնում վերահսկողությունը բժշկական սպասարկման նկատմամբ:

- **Առողջապահության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք,
Հոդված 12, մաս 4

Հարց 120. Ծնողները (երեխայի օրինական ներկայացուցիչները) իրավունք ունեն՝

- **Ընտրելու նախադպրոցական ուսումնական հաստատությունը, կրթական ծրագիրը և ծառայությունները:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք,
Հոդված 16, մաս 1, կետ 1

Հարց 121. Ծնողները (երեխայի օրինական ներկայացուցիչները) պարտավոր են՝

- **Երեխաների մեջ սերմանել հարգալից վերաբերմունք կրթական հաստատության և մանկավարժների նկատմամբ, հոգատար վերաբերմունք հաստատության գույքի և շրջակա միջավայրի նկատմամբ:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք,
Հոդված 16, մաս 2, կետ 2

Հարց 122. Ո՞ր մարմինն է սահմանում նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագիրը:

- **Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:**

Հարց 123. Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողն իրավունք ունի՝

- **Իրականացնելու ծնողական կրթության դասընթացներ:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք,
Հոդված 17, մաս 2, կետ 11

Հարց 124. Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողը պարտավոր է՝

- **Նպաստել սաների արժեքային համակարգի ձևավորմանը, խմբերում ներառական և երեխայակենտրոն միջավայրի ստեղծմանը:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք,
Հոդված 17, մաս 3, կետ 4

Հարց 125. Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողները ի՞նչ պարբերությամբ են անցնում պարտադիր վերապատրաստում

- **հինգ տարին մեկ**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք, Հոդված 17, մաս 4

Հարց 126. Ո՞ր մարմիններն են իրականացնում նախադպրոցական կրթության բնագավառի կառավարումը:

- **Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները:**

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք,
հոդված 22, մաս 2, կետ 3

Հարց 127. Հայաստանի Հանրապետության պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպությունները պարտավոր են՝

- **Գործավարությունը կատարել գրական հայերենով՝ ապահովելով հայոց լեզվի անաղարտությունը, ամրագրված լեզվական կանոնները:**

«Լեզվի մասին» օրենք հոդված 4. ա

Հարց 128. Հայաստանի Հանրապետության տարածքում օտարալեզու ոչ հանրակրթական ուսումնական հաստատություն կարող է հիմնել՝

- **Միայն Հայաստանի Հանրապետության կառավարությունը:**

«Լեզվի մասին» օրենք հոդված 2, 3-րդ պարբ.

Հարց 129. Տեսչական մարմինը ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է՝

- **Օրենքով:**

«Տեսչական մարմինների մասին» օրենք, հոդված 5, մաս 2.

Հարց 130. Նշվածներից ո՞ր մարմինն է հաշվետու տեսչական մարմնի ղեկավարը:

- **Հայաստանի Հանրապետության կառավարությանը, Հայաստանի Հանրապետության վարչապետին և Խորհրդին:**

«Տեսչական մարմինների մասին» օրենք, հոդված 8, մաս 2

Հարց 131. Տեսչական մարմնի ղեկավարին պաշտոնից ազատում է՝

- **Հայաստանի Հանրապետության վարչապետը:**

«Տեսչական մարմինների մասին» օրենք, հոդված 8, մաս 1

Հարց 132. Նշվածներից ո՞րն է տեսչական մարմնի գործունեության սկզբունք:

- **Հաշվետվողականություն:**

«Տեսչական մարմինների մասին» օրենք, հոդված 4, մաս 1, կետ 3

Հարց 133. Ի՞նչ կարող է ունենալ տեսչական մարմինը:

- **Կառուցվածքային ստորաբաժանումներ:**

«Տեսչական մարմինների մասին» օրենք, հոդված 5, մաս 3

Հարց 134. Նշվածներից ո՞ր լիազորությունն է իրականացնում տեսչական մարմինը:

- **Համապատասխան ոլորտներում Հայաստանի Հանրապետության օրենքների և դրանց համապատասխան ընդունված իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ բացատրական աշխատանքների իրականացումը, տնտեսավարող սուբյեկտներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացումը:**

Հարց 135. Տեսչական մարմինների և դրանց ծառայողների գործողությունների կամ անգործության, այդ թվում՝ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ վարչական ակտը ո՞ր մարմիններին կարող է բողոքարկվել:

- Ակտն ընդունած տեսչական մարմին կամ դատարան:

«Տեսչական մարմինների մասին» օրենք, հոդված 9, մաս 1

Հարց 136. Ի՞նչն է հանդիսանում տեսչական մարմինների աշխատանքի հիմք:

- Մասնագիտական կարողությունները և դրանց շարունակական կատարելագործումը:

«Տեսչական մարմինների մասին» օրենք, հոդված 10, մաս 2

Հարց 137. Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմինը՝

- Վերահսկողություն և օրենքով սահմանված այլ գործառույթներ իրականացնող Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա մարմին է, որն օրենքով սահմանված կարգով կիրառում է պատասխանատվության միջոցներ կրթության բնագավառում՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից:

ՀՀ վարչապետի 2018 թ. հունիսի 11-ի
N 729-Լ որոշում, կետ 1

Հարց 138. Տեսչական մարմինը՝

- Ստեղծվում, վերակազմակերպվում է, և նրա գործունեությունը դադարեցվում է օրենքով:

ՀՀ վարչապետի 2018 թ. հունիսի 11-ի
N 729-Լ որոշում, կետ 2

Հարց 139. Տեսչական մարմնի նպատակն է՝

- Հայաստանի Հանրապետությունում կրթության որակի բարձրացմանն աջակցումը, կրթության բնագավառի քաղաքականության սկզբունքների առավելագույն իրացմանն ապահովումը, կրթության բնագավառում նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարմանն աջակցումը, կրթության բնագավառը կարգավորող օրենսդրությամբ սահմանված գործընթացների անհամապատասխանությունների և խախտումների կանխարգելմանը, խնդիրների բացահայտմանը, կարգավորումների բարելավմանն աջակցումը, սովորողների կրթության իրավունքի, կրթության և վերջնարդյունքների հասանելիության հավասար հնարավորությունների ապահովումը:

ՀՀ վարչապետի 2018 թ. հունիսի 11-ի
N 729-Լ որոշում, կետ 8

Հարց 140. Տեսչական մարմնի խնդիրներն են՝

- Կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների կատարմանն ուղղված կանխարգելիչ գործառույթների իրականացումը, կրթության բնագավառի շահառուների կրթական իրավունքների պաշտպանությանը միտված կանխարգելիչ գործառույթների իրականացումը, հանրակրթական, այդ թվում՝ նախադպրոցական ծրագրերի իրացման գործընթացների և սովորողների կողմից այդ ծրագրերի յուրացման հնարավորությունների ապահովմանն աջակցումը, ձեռք բերված տվյալների վերլուծությունը և նպատակային կառավարումը, կրթական գործընթացների և ծառայությունների արդյունավետության գնահատման ու հետադարձ կապի ապահովումը, կրթության բնագավառում ռիսկերի գնահատումը և կառավարումը:

ՀՀ վարչապետի 2018 թ. հունիսի 11-ի
N 729-Լ որոշում, կետ 9

Հարց 141. Ո՞վ է հաստատում տեսչական մարմնի կանոնադրությունը, այդ թվում կառուցվածքը, և դրանցում կատարում փոփոխություններ:

- ՀՀ վարչապետը:

ՀՀ վարչապետի 2018 թ. հունիսի 11-ի
N 729-Լ որոշում, կետ 12, 1-ին ենթակետ

Հարց 142. Ո՞ւմ կողմից և ինչպե՞ս են սահմանվում տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները:

- Տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները սահմանում է տեսչական մարմնի ղեկավարը՝ հաստատելով դրանց կանոնադրությունները:

ՀՀ վարչապետի 2018 թ. հունիսի 11-ի
N 729-Լ որոշում, կետ 28

Հարց 143. Մենթոր հաստատությունների ցանկում ընդգրկվելու համար հաստատությունը մինչև տվյալ տարվա մարտի 30-ը դիմում է՝

- «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամին:

ՀՀ ԿԳՄՍՆ

«Մենթոր հաստատությունների ընտրության և մենթորական աջխատանքների իրականացնողների գործառույթները սահմանելու մասին» կարգ
Հավելված 1, կետ 4

Հարց 144. Հաստատությունը Մենթոր հաստատությունների ցանկից կարող է հանվել հետևյալ դեպքերում՝

- Կրթության տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքում ձևավորված ռիսկային միավորների:

ՀՀ ԿԳՄՍՆ

«Մենթոր հաստատությունների ընտրության և մենթորական աշխատանքներ իրականացնողների գործառույթները սահմանելու մասին կարգ»

Հավելված 1, կետ 9

Հարց 145. Ո՞ր ծրագիրն է համարվում այլընտրանքային:

- Այլընտրանքային է համարվում նախադպրոցական կրթության նպատակների իրականացմանն ուղղված, սաների տարիքային առանձնահատկություններին համապատասխան՝ ուսումնական պարամունքների, ուսուցման և դաստիարակության կազմակերպման ձևերի բազմազանություն առաջարկող, զարգացման որևէ ոլորտի գերակայմամբ կամ հիմնական ծրագրից առնվազն երկու բաղադրիչով տարբերվող նախադպրոցական կրթական ծրագիրը, որն ապահովում է նախադպրոցական պետական կրթական չափորոշիչով սահմանված վերջնարդյունքները:

ՀՀ ԿԳՄՍՆ

«Նախադպրոցական կրթական ծրագրերի (այդ թվում՝ այլընտրանքային, լրացուցիչ և նախադպրոցական ծառայությունների), ուսումնական նյութերի՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչին համապատասխանության փորձաքննության կարգ»

Հավելված, կետ 7

Հարց 146. Ո՞ր կրթական ծրագիրն է համարվում նախադպրոցական ծառայության:

- Նախադպրոցական ծառայության կրթական ծրագիրը նախադպրոցական հիմնական ծրագրի մեկ կամ մի քանի բաղադրիչների ներառմամբ կազմված կամ հիմնական ծրագրի ծավալի առավելագույնը 2/3-ը ներառող ծրագիր է, որը մասնակիորեն ապահովում է նախադպրոցական պետական կրթական չափորոշիչով սահմանված վերջնարդյունքները:

ՀՀ ԿԳՄՍՆ

«Նախադպրոցական կրթական ծրագրերի (այդ թվում՝ այլընտրանքային, լրացուցիչ և նախադպրոցական ծառայությունների), ուսումնական նյութերի՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչին համապատասխանության փորձաքննության կարգ»

Հավելված, կետ 10

Հարց 147. Ո՞ր նախադպրոցական կրթական ծրագիրն է համարվում լրացուցիչ:

- Լրացուցիչ կրթական ծրագիրը նախադպրոցական ուսումնական հաստատության կողմից իրականացվող նախադպրոցական հիմնական, այդ թվում՝ այլընտրանքային, հեղինակային, միջազգային և փորձարարական կրթական ծրագրերից դուրս ուսուցման ծրագիր է, որը նպատակաուղղված է երեխաների նախասիրությունների, զարգացման լրացուցիչ պահանջմունքների բավարարմանը և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչով սահմանված վերջնարդյունքների լրացմանն ու կատարելագործմանը:

«Նախադպրոցական կրթական ծրագրերի (այդ թվում՝ այլընտրանքային, լրացուցիչ և նախադպրոցական ծառայությունների), ուսումնական նյութերի՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին համապատասխանության փորձաքննության կարգ»
Հավելված, կետ 9

Հարց 148. Նախադպրոցական Հեղինակային կրթական ծրագիրը փորձաքննության է ներկայացվում՝

- **օրենքով սահմանված կարգով որպես մտավոր սեփականություն գրանցվելուց հետո:**

«Նախադպրոցական կրթական ծրագրերի (այդ թվում՝ այլընտրանքային, լրացուցիչ և նախադպրոցական ծառայությունների), ուսումնական նյութերի՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին համապատասխանության փորձաքննության կարգ»
Հավելված, կետ 14

Հարց 149. Նախադպրոցական այլընտրանքային կրթական ծրագիր է՝

- **հեղինակային կրթական ծրագիրը:**

«Նախադպրոցական կրթական ծրագրերի (այդ թվում՝ այլընտրանքային, լրացուցիչ և նախադպրոցական ծառայությունների), ուսումնական նյութերի՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին համապատասխանության փորձաքննության կարգ»
Հավելված, կետ 8

Հարց 150. Նախադպրոցական այլընտրանքային կրթական ծրագիր է՝

- **փորձարարական կրթական ծրագիրը:**

«Նախադպրոցական կրթական ծրագրերի (այդ թվում՝ այլընտրանքային, լրացուցիչ և նախադպրոցական ծառայությունների), ուսումնական նյութերի՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին համապատասխանության փորձաքննության կարգ»
Հավելված, կետ 8

Հարց 151. Նախադպրոցական այլընտրանքային կրթական ծրագիր է՝

- **միջազգային կրթական ծրագիրը:**

«Նախադպրոցական կրթական ծրագրերի (այդ թվում՝ այլընտրանքային, լրացուցիչ և

նախադպրոցական ծառայությունների), ուսումնական նյութերի՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին համապատասխանության փորձաքննության կարգ»
Հավելված, կետ 8

Հարց 152. Նախադպրոցական հիմնական կրթական ծրագրերը մշակվում են՝

- «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի (ԿԶՆԱԿ) կողմից

ՀՀ ԿԳՄՍՆ

«Նախադպրոցական կրթական ծրագրերի (այդ թվում՝ այլընտրանքային, լրացուցիչ և նախադպրոցական ծառայությունների), ուսումնական նյութերի՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին համապատասխանության փորձաքննության կարգ»

- Հավելված, կետ 2

Հարց 153. Ի՞նչ իրավական ակտով են Նախադպրոցական հիմնական կրթական ծրագրերը երաշխավորվում գործածության:

- Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով:

ՀՀ ԿԳՄՍՆ

«Նախադպրոցական կրթական ծրագրերի (այդ թվում՝ այլընտրանքային, լրացուցիչ և նախադպրոցական ծառայությունների), ուսումնական նյութերի՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին համապատասխանության փորձաքննության կարգ»

- Հավելված, կետ 4

Հարց 154. Նախադպրոցական ուսումնական հաստատությունում ո՞ր աշխատատեղն է համարվում թափուր:

- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի մարտի 27-ի N 20-Ն հրամանով սահմանված նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկով (այսուհետ՝ անվանացանկ) և տվյալ հաստատության տարիֆիկացիոն ցուցակով նախատեսված՝ մանկավարժական աշխատողի չզբաղեցված պաշտոնը:

«Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության (նշանակման)» կարգ, կետ 2

Հարց 155. Նախադպրոցական ուսումնական հաստատությունում թափուր մնացած պաշտոնի առկայության դեպքում մրցույթ չի հայտարարվում, եթե՝

- Պաշտոնը թափուր է ժամանակավորապես (աշխատողի՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու կամ հղիության և ծննդաբերության արձակուրդի, մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի, ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում):

«Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության (նշանակման)» կարգ, կետ 6, մաս 1

Հարց 156. Քանի՞ փուլով է անցկացվում նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար մրցույթը:

- **Երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության (նշանակման)» կարգ, կետ 27

Հարց 157. Ե՞րբ է նշանակվում նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար մրցույթի անցկացման օր:

- **Փաստաթղթերի ընդունման ավարտից հետո ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության (նշանակման)» կարգ, կետ 10

Հարց 158. Նշվածներից ո՞ր մարմինն է մշակում նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի թեստավորման փուլի հարցաշար:

- **Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության (նշանակման)» կարգ, կետ 27

Հարց 159. Քանի՞ անդամից է կազմված նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի հանձնաժողովը:

- **5 անդամից:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության (նշանակման)» կարգ, կետ 17

Հարց 160. Ո՞վ է հաստատում նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար հայտարարված մրցութային հանձնաժողովի անվանական կազմը:

- **Հաստատության տնօրենը:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության (նշանակման)» կարգ, կետ 16

Հարց 161. Ե՞րբ է ձևավորվում նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար հայտարարված մրցութային հանձնաժողովը:

- **Մրցութի անցկացման օրվանից առնվազն 1 և ոչ ավելի, քան 2 աշխատանքային օր առաջ:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության (նշանակման)» կարգ, կետ 16

Հարց 162. Ի պաշտոնե ո՞վ է հանդիսանում նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար մրցութային հանձնաժողովի նախագահը:

- **Հաստատության տնօրենը:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության (նշանակման)» կարգ, կետ 19

Հարց 163. Ե՞րբ է նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար մրցութային հանձնաժողովի նիստն համարվում իրավազոր:

- **Եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի առնվազն 4 անդամ:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության (նշանակման)» կարգ, կետ 20

Հարց 164. Ո՞վ է բացատրում նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար մրցութի թեստավորման փուլի անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը և պատասխանում մասնակիցների հարցերին:

- **Հանձնաժողովի քարտուղարը:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության (նշանակման)» կարգ, կետ 32

Հարց 165. Որքա՞ն է նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար մրցութի թեստավորման առաջադրանքի համար տրվող ժամանակը:

- **90 րոպե:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության (նշանակման)» կարգ, կետ 38

Հարց 166. Ու՞մ կողմից են կազմվում նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար մրցույթի թեստավորման փուլի առաջադրանքները:

- **Յուրաքանչյուր հաստատություն նախարարության պաշտոնական կայքում հրապարակված հարցաշարի հիման վրա կազմում է թեստային առաջադրանք՝ բաղկացած հարցաշարի 50 հարցից և դրանց երեք կամ չորս ենթադրյալ պատասխաններից, որոնցից մեկը միանշանակ ամբողջական ճիշտ պատասխանն է, որը նշված է հարցաշարում:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության (նշանակման)» կարգ, կետ 28

Հարց 167. Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար մրցույթի թեստային առաջադրանքներում ներառված հարցերից քանի՞սը պետք է լինեն անվանացանկի՝ տվյալ պաշտոնի նկարագրին համապատասխան հարցեր:

- 25-ը:

«Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության (նշանակման)» կարգ, կետ 28.1

Հարց 168. Ե՞րբ է նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար մրցույթի մասնակիցը համարվում է հարցազրույցի փուլը հաղթահարած:

- **Եթե ճիշտ է պատասխանել հարցազրույցի հարցատոմսի 5 հարցերից առնվազն երեքին:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության (նշանակման)» կարգ, կետ 54

Հարց 169. Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար մրցույթի թեստավորման փուլի արդյունքները ե՞րբ կարող են բողոքարկվել մրցութային հանձնաժողովին:

- **Թեստավորման արդյունքների հրապարակումից հետո՝ մեկ ժամվա ընթացքում:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության (նշանակման)» կարգ, կետ 44

Հարց 170. Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար մրցույթի ո՞ր մասնակիցն է մրցույթում հաղթող ճանաչվում:

- Որը քվեարկության արդյունքում հավաքել է **Հանձնաժողովի՝ քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելիի կողմ ձայները:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության (նշանակման)» կարգ, կետ 61

Հարց 171. Եթե նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար մրցույթում հաղթող են ճանաչվել մեկից ավելի մասնակիցներ, ապա ո՞ր մասնակցին է տրվում նախապատվությունը:

- **Թեստավորման փուլում առավել բարձր միավորներ հավաքած մասնակցին:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության (նշանակման)» կարգ, կետ 67

Հարց 172. Ո՞ր դեպքում է նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար հայտարարվում նոր մրցույթ:

- **Եթե հանձնաժողովը մրցույթին մասնակցելու համար դիմած անձանցից ոչ մեկին չի թույլատրում մասնակցել մրցույթին:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության (նշանակման)» կարգ, կետ 26

Հարց 173. Նախադպրոցական ուսումնական հաստատությունում թափուր մնացած պաշտոնի առկայության դեպքում մրցույթ չի հայտարարվում, եթե՝

- **հաստատությունում առկա է տվյալ թափուր պաշտոնի՝ անվանացանկի և նկարագրերի պահանջներին համապատասխանող մեկից ոչ ավելի մանկավարժական աշխատող, որն աշխատում է ոչ լրիվ աշխատաժամանակով և տվել է իր գրավոր համաձայնությունը համատեղությամբ աշխատելու մասին.**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության (նշանակման)» կարգ, կետ 6, ենթակետ 3

Հարց 174. Ինչպե՞ս է սահմանվում «անհատական իրավական ակտ» հասկացությունը:

- **Նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված գրավոր իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն կամ առաջացնում է**

փաստական հետևանքներ և վերաբերում է միայն դրանում անհատապես նշված անձի կամ անձանց:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք, հոդված 2, մաս 1, կետ 5

Հարց 175. Ինչպե՞ս է սահմանվում «ներքին (լոկալ) իրավական ակտ» հասկացությունը:

- Նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն այն անձանց խմբի համար, որոնք դա ընդունող մարմնի հետ աշխատանքային քաղաքացիաիրավական կամ վարչական հարաբերությունների մեջ են կամ օգտվում են դա ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք, հոդված 2, մաս 1, կետ 6

Հարց 176. Ո՞ր լեզվով են շարադրվում նորմատիվ իրավական ակտերը:

- Նորմատիվ իրավական ակտերը շարադրվում են պետական լեզվով՝ հայերենով:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք, հոդված 10, մաս 1

Հարց 177. Նորմատիվ իրավական ակտերով սահմանվող ձևաթղթերը՝

- Կարող են շարադրվել օտար լեզվով կամ հայերենով՝ օտար լեզվի զուգորդմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք, հոդված 10, մաս 3

Հարց 178. Ինչպե՞ս են հաշվարկվում նորմատիվ իրավական ակտերով սահմանված ժամկետները:

- Տարիներով, ամիսներով, օրերով և ժամերով:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք, հոդված 31, մաս 1

Հարց 179. Ո՞վ է օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն կրում իրավասու մարմինների տված պաշտոնական սխալ պարզաբանման հետևանքով պատճառված վնասի համար:

- Հայաստանի Հանրապետությունը կամ համապատասխան համայնքը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք, հոդված 44, մաս 2

Հարց 180. Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ ո՞ր մարմիններն են տալիս պաշտոնական պարզաբանում:

- Պաշտոնական պարզաբանում տալիս են ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինները, բացառությամբ Ազգային ժողովի ընդունած ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք, հոդված 42, մաս 4

Հարց 181. Ո՞ր դեպքում է պայմանագիրը համարվում կնքված:

- Պայմանագիրը համարվում է կնքված, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 448, մաս 1

Հարց 182. Ովքե՞ր են պատասխանատվություն կրում տասնչորս տարեկան չդարձած անչափահասի (փոքրահասակի) պատճառած վնասի համար:

- Պատասխանատվություն են կրում նրա ծնողները, որդեգրողները կամ խնամակալը, եթե չեն ապացուցում, որ վնասն անչափահասի (փոքրահասակի) մեղքով չի պատճառվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 1067, մաս 1

Հարց 183. Ինչպիսի՞ պատասխանատվություն են կրում տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասներն իրենց պատճառած վնասի համար:

- Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասներն ընդհանուր հիմունքներով ինքնուրույն պատասխանատվություն են կրում իրենց պատճառած վնասի համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 1068, մաս 1

Հարց 184. Ովքե՞ր պետք է հատուցեն տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասի պատճառած վնասի համար, եթե նա չունի բավարար եկամուտներ կամ այլ գույք:

- Վնասը լրիվ կամ պակասող մասով պետք է հատուցեն նրա ծնողները, որդեգրողները կամ հոգաբարձուն, եթե չեն ապացուցում, որ վնասն իրենց մեղքով չի պատճառվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 1068, մաս 2

Հարց 185. Ի՞նչ է պարտավորվում վարձատուն վարձակալության պայմանագրով:

- **Վարձակալության պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնել գույք:**
ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 606

Հարց 186. Նշվածներից ո՞րն է վարձակալության պայմանագրին առաջադրվող պահանջներից:

- **Վարձակալության պայմանագիրը կնքվում է գրավոր:**

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 610, մաս 1

Հարց 187. Նշվածներից ո՞րն է անշարժ գույքի վարձակալության պայմանագրին առաջադրվող պահանջներից:

- **Անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:**

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 610, մաս 2

Հարց 188. Շենքի կամ շինության վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են՝

- **Պետական գրանցման:**

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 655

Հարց 189. «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն պատվիրատու համարվում են՝

- **ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ օրենքներով նախատեսված պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, պետության կամ համայնքների հիմնարկները:**

«Գնումների մասին» օրենք, հոդված 2, մաս 1, կետ 1, ենթակետ ա.

Հարց 190. Նշվածներից ո՞րն է համարվում գնում:

- **Պատվիրատուի հատուցմամբ՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու միջոցով բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը, լիզինգը, պատվիրատուի կողմից նվիրաբերության կարգով իրավաբանական անձանց հատկացվող միջոցների հաշվին ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը, փոխանակման ձևով ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերումը:**

«Գնումների մասին» օրենք, հոդված 2, մաս 1 կետ 3

Հարց 191. «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ նշվածներից ո՞ր մարմինն է համարվում լիազորված մարմին:

- Պետական ֆինանսների կառավարման բնագավառում ՀՀ կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող ՀՀ գործադիր իշխանության պետական մարմինը:

«Գնումների մասին» օրենք հոդված 2 , մաս 1 , կետ 13

Հարց 192. Որքա՞ն է գնումների բազային միավորը:

- Մեկ միլիոն ՀՀ դրամ:

«Գնումների մասին» օրենք, հոդված 2, կետ 21

Հարց 193. Նշված գործարքներից ո՞ր տեսակի վրա չի տարածվում «Գնումների մասին» ՀՀ օրենքի գործողությունը:

- Աշխատանքային պայմանագրերի:

«Գնումների մասին» օրենք հոդված 3 , մաս 4, կետ 1

Հարց 194. Նշվածներից ո՞րն է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող որակավորման չափանիշը:

- Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը:

«Գնումների մասին» օրենք, հոդված 6, մաս 3, կետ 1

Հարց 195. Նշվածներից ո՞րն է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող որակավորման չափանիշը:

- Մասնագիտական փորձառությունը:

«Գնումների մասին» օրենք, հոդված 6, մաս 3, կետ 2

Հարց 196. Նշվածներից ո՞րն է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող որակավորման չափանիշը:

- Տեխնիկական միջոցները:

«Գնումների մասին» օրենք, հոդված 6, մաս 3, կետ 3

Հարց 197. Նշվածներից ո՞րն է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող որակավորման չափանիշը:

- **Ֆինանսական միջոցները:**

«Գնումների մասին» օրենքի հոդված 6, մաս 3, կետ 4

Հարց 198. Նշվածներից ո՞րն է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող որակավորման չափանիշը:

- **Աշխատանքային ռեսուրսները:**

«Գնումների մասին» օրենքի հոդված 6, մաս 3, կետ 5

Հարց 199. Ի՞նչ փաստաթղթով է ձևավորվում գնահատող հանձնաժողովը:

- **Պատվիրատուի ղեկավարի հրամանով:**

«Գնումների մասին» օրենք, հոդված 26, մաս 1

Հարց 200. Գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝

- **Գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը:**

«Գնումների մասին» օրենք, հոդված 9, մաս 1, կետ 2

Հարց 201. Պատվիրատուն ո՞ր մարմին է ներկայացնում գնումների տարեկան հաշվետվությունը:

- **Լիազորված մարմին:**

«Գնումների մասին» օրենք, հոդված 9, մաս 5

Հարց 202. Նշվածներից ո՞րն է գնման առարկայի բնութագիր:

- **Մրցակցության հավասար պայմանների ապահովում հնարավոր մասնակիցների համար:**

«Գնումների մասին» օրենք, հոդված 13, մաս 2, կետ 1

Հարց 203. Նշվածներից ո՞րն է գնման առարկայի բնութագիր:

- **Օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինելը այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:**

«Գնումների մասին» օրենք, հոդված 13, մաս 2, կետ 3

Հարց 204. Ո՞ր դեպքում գնման առարկայի հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը՝

- **Հղումներ օգտագործելու դեպքում:**

«Գնումների մասին» օրենք, հոդված 13, մաս 5

Հարց 205. Նշվածներից ո՞վ է որոշում գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին):

- **Գնահատող հանձնաժողովը:**

«Գնումների մասին» օրենք, հոդված 26 , մաս 1, կետ 5

Հարց 206. Ո՞վ է հաստատում գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը:

- **ՀՀ կառավարությունը:**

«Գնումների մասին» օրենք, հոդված 5, մաս 1, կետ 11

Հարց 207. Շինարարական աշխատանքների գնման համար նշվածներից ո՞ր փաստաթղթերի հիման վրա են նախատեսվում ֆինանսական միջոցներ:

- **Սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերի:**

«Գնումների մասին» օրենք հոդված 15, մաս 4

Հարց 208. Նշվածներից ո՞վ ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

- **Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:**

«Գնումների մասին» օրենք հոդված 7, մաս 1

Հարց 209. Նշվածներից ո՞րն է գնում կատարելու ընթացակարգ:

- **Էլեկտրոնային աճուրդը:**

«Գնումների մասին» օրենք, հոդված 18, մաս 1, կետ 1

Հարց 210. Նշվածներից ո՞րն է գնում կատարելու ընթացակարգ:

- **Գնանշման հարցումը:**

«Գնումների մասին» օրենք, հոդված հոդված 18, մաս 1, կետ 3

Հարց 211. Նշվածներից ո՞րն է գնում կատարելու ընթացակարգ:

- **Մեկ անձից գնումը:**

«Գնումների մասին» օրենք, հոդված 18, մաս 1, կետ 4

Հարց 212. Ի՞նչ կարգով են ծագում աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները:

- **Աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով:**

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 14, մաս 1

Հարց 213. Նշվածներից ո՞ր աշխատողների հետ է կնքվում որոշակի ժամկետով պայմանագրեր՝

- **Սեզոնային աշխատանքներ կատարողների հետ:**

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 95, մաս 3, կետ 3

Հարց 214. Նշվածներից ո՞ր աշխատողների հետ է կնքվում որոշակի ժամկետով պայմանագրեր:

- **Ժամանակավորապես բացակայող աշխատողին փոխարինող աշխատողի հետ:**

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 95, մաս 3, կետ 5

Հարց 215. Նշվածներից ո՞ր աշխատողների հետ է կնքվում որոշակի ժամկետով պայմանագրեր:

- **Օտարերկրացիների հետ՝ կացության իրավունքի վավերականության ժամկետով, եթե ՀՀ-ում աաշխատելու համար օտարերկրացուց պահանջվում է ունենալ կացության կարգավիճակ:**

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 95, մաս 3, կետ 6

Հարց 216. Ե՞րբ է որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիրը համարվում կնքված անորոշ ժամկետով :

- Եթե նույն գործատուի մոտ նույն աշխատողի հետ նույն աշխատանքի համար որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվում է, կամ նույն գործատուի մոտ նույն աշխատանքի համար նույն աշխատողի հետ երկրորդ անգամ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որոնց ընդհատումը չի գերազանցում մեկ ամիսը:

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք»,
հոդված 95, մաս 2.1

Հարց 217. Գործատուն մինչև 18 տարեկան անձանց ի՞նչ պայմանով կարող է ընդգրկել աշխատանքի:

- Միայն այնպիսի աշխատանքներում, որոնք չեն վտանգում նրանց առողջությունը (այդ թվում՝ ֆիզիկական և մտավոր զարգացումը), բարոյականությունը, չեն սպառնում նրանց անվտանգությանը և չեն խոչընդոտում նրանց պարտադիր կրթությունը:

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք»,
հոդված 17.1, մաս 5

Հարց 218. Նշվածներից ո՞րն է աշխատանքային պայմանագրի՝ նախքան դրա գործողության ժամկետի լրանալը, լուծելու հիմք:

- Գործատուի լուծարման (գործունեության դադարման), պետական հաշվառումից հանվելու, նոտար գործատուի դեպքում՝ պաշտոնից ազատվելու դեպքերում:

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք»,
հոդված 113, մաս 1, կետ 1

Հարց 219. Նշվածներից ո՞րն է աշխատանքային պայմանագրի՝ նախքան դրա գործողության ժամկետի լրանալը, լուծելու հիմք՝

- Աշխատողի՝ զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու դեպքը:

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք»,
հոդված 113, մաս 1, կետ 3

Հարց 220. Նշվածներից ո՞րն է աշխատանքային պայմանագրի՝ նախքան դրա գործողության ժամկետի լրանալը, լուծելու հիմք:

- Աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականություններն առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու դեպքը:

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք»,

Հարց 221. Նշվածներից ո՞րն է աշխատանքային պայմանագրի՝ նախքան դրա գործողության ժամկետի լրանալը, լուծելու հիմք:

- **Աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքը:**

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք»,
հողված 113 , մաս 1, կետ 6

Հարց 222. Նշվածներից ո՞րն է աշխատանքային պայմանագրի՝ նախքան դրա գործողության ժամկետի լրանալը, լուծելու հիմք:

- **Անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ աշխատանքի չներկայանալու դեպքը:**

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք»,
հողված 113, մաս 1, կետ 9

Հարց 223. Նշվածներից ո՞րն է աշխատանքային պայմանագրի, նախքան դրա գործողության ժամկետի լրանալը, լուծելու հիմք:

- **Պարտադիր բժշկական զննությունից աշխատողի հրաժարվելու կամ խուսափելու դեպքը:**

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք»,
հողված 113, մաս 1, կետ 10

Հարց 224. Նշվածներից ո՞րն է աշխատանքային պայմանագրի՝ նախքան դրա գործողության ժամկետի լրանալը, լուծելու հիմք:

- **աշխատողի երկարատև անաշխատունակության դեպքում (եթե աշխատողը ժամանակավոր անաշխատունակության մեջ է գտնվել ավելի քան վեց ամիս անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 180 օր՝ չհաշված հղիության և ծննդաբերության արձակուրդի օրերը).**

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հողված 113, մաս 1, կետ 7

Հարց 225. Ո՞ր գործողություններն են աշխատանքային կարգապահության խախտում համարվում:

- **Աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը:**

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հողված 220, մաս 1

Հարց 226. Ե՞րբ կարող է կարգապահական տույժ կիրառվել, եթե աշխատողը գրավոր բացատրության չի ներկայացրել:

- **Եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում գրավոր բացատրություն:**

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք» հոդված 226, մաս 1

Հարց 227. Եթե աշխատողը գործատուի կողմից աշխատանքի պայմանների փոփոխման կամ աշխատանքային հարաբերությունների դադարեցման հետ համաձայն չէ, ապա ի՞նչ ժամկետում կարող է դիմել դատարան:

- **Համապատասխան իրավական ակտը, ստանալու օրվանից հետո՝ երկու ամսվա ընթացքում:**

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 265, մաս 1

Հարց 228. Ի՞նչ ակտով են սահմանվում ժամային, /օրական/ գործավարձային և ամսական դրույքաչափերը, աշխատանքի վարձատրության այլ ձևերը, չափն ու պայմանները, աշխատանքի նորմաները:

- **Կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով:**

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 180, մաս 2

Հարց 229. Նշվածներից ո՞րն է գործատուի կողմից աշխատանքային պայմանագրի, նախքան դրա գործողության ժամկետի լրանալը, լուծելու հիմք՝

- **Աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու դեպքը:**

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք»,
հոդված 113, մաս 1, կետ 4

Հարց 230. Որքա՞ն է աշխատաժամանակի շաբաթական նորմալ տևողությունը:

- **Աշխատաժամանակի նորմալ տևողությունը չի կարող անցնել շաբաթական 40 ժամից:**

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 139, մաս 1

Հարց 231. Որքա՞ն է 16-ից մինչև 18 տարեկան աշխատողների աշխատաժամանակի կրճատ տևողությունը:

- **Շաբաթական մինչև 36 ժամ:**

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 140, մաս 1, կետ 5

Հարց 232. Որքա՞ն է ամենամյա նվազագույն արձակուրդի տևողությունը:

- Ամենամյա նվազագույն արձակուրդի տևողությունը հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում 20 աշխատանքային օր է, իսկ վեցօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ 24 աշխատանքային օր:

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք» , հոդված 159, մաս 1

Հարց 233. Որքա՞ն է ամենամյա երկարացված արձակուրդի տևողությունը բացառիկ դեպքերում:

- Բացառիկ դեպքերում՝ 35 աշխատանքային օր՝ հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում և 42 աշխատանքային օր՝ վեցօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում:

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք» , հոդված 160

Հարց 234. Աշխատանքային առաջին տարում ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողներին և պրոֆեսորադասախոսական կազմին ե՞րբ է տրամադրվում ամենամյա արձակուրդը:

- Սովորողների և ուսանողների ամառային արձակուրդի ժամանակ՝ այդ թվում՝ աշխատանքային առաջին տարում, անկախ այն հանգամանքից, թե երբ են այդ աշխատողներն սկսել իրենց աշխատանքը:

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք» , հոդված 164, մաս 6

Հարց 235. Ո՞ր դեպքում է թույլատրվում ամենամյա արձակուրդից հետո կանչելը՝

- Ամենամյա արձակուրդից հետո կանչել թույլատրվում է միայն աշխատողի համաձայնությամբ:

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 166 կետ 1

Հարց 236. Ե՞րբ է իրականացվում ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարումը:

- Ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդն սկսելուց 3 օր առաջ, իսկ եթե դա հնարավոր չէ գործատուից անկախ պատճառներով, ապա ամենամյա արձակուրդն սկսելու՝ աշխատողի դիմումում նշված ժամկետից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 169, մաս 2

Հարց 237. Ե՞րբ են գործատուի ընդունած ներքին և անհատական իրավական ակտերն ուժի մեջ մտնում:

- Այդ ակտի մասին համապատասխան անձանց պատշաճ կարգով իրազեկելու պահից, եթե այդ իրավական ակտերով այլ ժամկետ նախատեսված չէ:

Հարց 238. Որքա՞ն է աշխատաժամանակի առավելագույն տևողությունը, ներառյալ՝ արտաժամյա աշխատանքը:

- **Աշխատաժամանակի առավելագույն տևողությունը, ներառյալ՝ արտաժամյա աշխատանքը չի կարող անցնել օրական 12 ժամից (հանգստի և սնվելու համար՝ ընդմիջումը ներառյալ), իսկ շաբաթվա ընթացքում՝ 48 ժամից:**

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք» , հոդված 139, մաս 3

Հարց 239. Նշվածներից ո՞րն է նպատակային արձակուրդի տեսակ:

- **Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդը:**

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 171, կետ 2

Հարց 240. Չվճարվող արձակուրդը ի՞նչ կարգով է տրամադրվում հաշմանդամություն ունեցող աշխատողին կամ ընտանիքի հիվանդ անդամին խնամող աշխատողին:

- **Բժշկական եզրակացությամբ սահմանված ժամկետներում, սակայն ոչ ավելի, քան 30 աշխատանքային օր տարվա ընթացքում:**

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 176, մաս 1, կետ 2

Հարց 241. Ժամանակավոր աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում արձակման նպաստ վճարվո՞ւմ է, թե ոչ՝

- **Արձակման նպաստ չի վճարվում:**

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 101, մաս 4

Հարց 242. Ի՞նչ պարբերականությամբ և ժամկետներում է հաշվարկվում ու վճարվում աշխատավարձը:

- **Աշխատավարձը յուրաքանչյուր ամիս հաշվարկվում և աշխատանքային օրերին վճարվում է աշխատողին ամսական առնվազն մեկ անգամ՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը:**

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 192, մաս 1

Հարց 243. Քանի՞ օր առաջ և ի՞նչ կարգով է գործատուն պարտավոր նախազգուշացնել փորձաշրջանը չանցած աշխատողին՝ աշխատանքից ազատվելու մասին:

- **Գործատուն կարող է մինչև փորձաշրջանի ժամկետը լրանալը աշխատողին ազատել աշխատանքից՝ այդ մասին երեք օր առաջ գրավոր ձևով ծանուցելով նրան:**

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 93, մաս 1

Հարց 244. Ո՞ր աշխատանքն է համարվում համատեղությամբ կատարվող աշխատանք:

- Հիմնական աշխատանքից ազատ ժամանակ, միևնույն գործատուի կամ այլ գործատուի մոտ աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատողի կատարած աշխատանքը:

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 99, մաս 1

Հարց 245. Միևնույն անձը կարո՞ղ է միաժամանակ ներկայացնել աշխատողների և գործատուների շահերն ու պաշտպանել դրանք:

- Միաժամանակ չի կարող:

« ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 23, մաս 4

Հարց 246. Ո՞ր օրն է աշխատողը պարտավոր աշխատանքի անցնել:

- Աշխատանքային պայմանագրում նշված օրը:

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 85, մաս 3

Հարց 247. Նշված հիմքերից ո՞ր դեպքում է լուծվում աշխատանքային պայմանագիրը:

- Կողմերի համաձայնությամբ:

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 109, մաս 1, 1 կետ

Հարց 248. Նշվածներից ո՞ր դեպքում է լուծվում աշխատանքային պայմանագիրը:

- Պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում:

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 109, մաս 1, կետ 2

Հարց 249. Նշվածներից ո՞ր դեպքում է լուծվում աշխատանքային պայմանագիրը:

- Աշխատողի նախաձեռնությամբ:

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 109, մաս 1, կետ 3

Հարց 250. Նշվածներից ո՞ր դեպքում է լուծվում աշխատանքային պայմանագիրը:

- Գործատուի նախաձեռնությամբ:

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 109, մաս 1, կետ 4

Հարց 251. Նշվածներից ո՞ր դեպքում է լուծվում աշխատանքային պայմանագիրը:

- Աշխատողի պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչելու դեպքում:

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 109, մաս 1, կետ 5

Հարց 252. Նշվածներից ո՞ր դեպքում է լուծվում աշխատանքային պայմանագիրը:

- Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայության դեպքում, որին համապատասխան՝ աշխատողը ենթարկվել է այնպիսի պատասխանատվության, որը հնարավորություն չի տալիս շարունակելու աշխատանքը:

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք» , հոդված 109, մաս 1, կետ 6

Հարց 253. Կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում աշխատողին քանի՞ օրով կարող է տրամադրվել չվճարվող արձակուրդ՝ մեկ աշխատանքային տարվա ընթացքում:

- Ոչ ավելի, քան 60 օր:

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք» , հոդված 176 , մաս 3

Հարց 254. Նշվածներից ո՞րն է նպատակային արձակուրդի տեսակ:

- Չվճարվող արձակուրդը:

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 171, կետ 5

Հարց 255. Ո՞ր դեպքում կարգապահական տույժը կարող է հանվել:

- Եթե մինչև մեկ տարին լրանալը, աշխատողը թույլ չի տվել նոր կարգապահական խախտում և բարեխղճորեն կատարում է իր աշխատանքային պարտականությունները:

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 230

Հարց 256. Ո՞ր դեպքերում ամենամյա արձակուրդից հետո կանչելիս աշխատողի համաձայնությունը չի պահանջվում:

- Ռազմական դրություն հայտարարվելու դեպքում:

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք» հոդված 166, մաս 2

Հարց 257. Հաշվապահական հաշվառման կարգավորման գործում ինչի՞ համար է պատասխանատու կազմակերպության ղեկավարությունը:

- Հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում կազմակերպելու և ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելու համար:

«Հաշվապահական հաշվառման մասին» օրենք, հոդված 8, մաս 1

Հարց 258. Ինչի՞ համար է պատասխանատու հաստատության գլխավոր հաշվապահը:

- **Հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվությունները ժամանակին պատրաստելու համար:**

«Հաշվապահական հաշվառման մասին» օրենք, հոդված 9, մաս 2

Հարց 259. «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին օրենքի համաձայն՝ ո՞վ է պատասխանատվություն կրում հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պահպանումը կազմակերպելու համար:

- **Հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պահպանումը կազմակերպելու պատասխանատվությունը կրում է կազմակերպության ղեկավարը:**

«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին օրենք, հոդված 16 մաս 3

Հարց 260. «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին ՀՀ օրենքի համաձայն՝ ո՞րն է համարվում Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման օր:

- **Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման օր է համարվում դրանց՝ ըստ պատկանելության հանձնելու օրը:**

«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին օրենք, հոդված 20, մաս 3

Հարց 261. «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին ՀՀ օրենքի համաձայն՝ ե՞րբ է կազմակերպությունը պարտադիր անցկացնում ակտիվների և պարտավորությունների գույքագրում:

- **Տարեկան ֆինանսական հաշվետվությունները պատրաստելուց առաջ ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունն ապահովելու նպատակով, ինչպես նաև կազմակերպության վերակազմակերպման և (կամ) լուծարման դեպքերում կազմակերպությունը պարտադիր անցկացնում է ակտիվների և պարտավորությունների գույքագրում:**

«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին օրենք, հոդված 14, մաս 1

Հարց 262. Նշվածներից ո՞րն է վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

- **Իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառած վնասը կամավոր հատուցելը կամ վերացնելը:**

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ»

Հարց 263. Նշվածներից ո՞րն է վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

- **Իրավախախտում կատարելը անչափահասի կողմից:**

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ»
օրենսգիրք, հոդված 33, կետ 4

Հարց 264. Նշվածներից ո՞րն է վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:

- **Մեկ տարվա ընթացքում կրկին նման իրավախախտում կատարելը, որի համար անձն արդեն ենթարկվել է վարչական տույժի. իրավախախտում կատարելը նախկինում հանցագործություն կատարած անձի կողմից:**

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ»
ՀՀ օրենսգիրք, հոդված 34, կետ 2

Հարց 265. Ո՞ր ժամկետում և դեպքում է անձը համարվում վարչական տույժի չենթարկված:

- **Եթե վարչական տույժի ենթարկված անձը տույժի կատարումն ավարտելու օրվանից մեկ տարվա ընթացքում նոր վարչական իրավախախտում չի կատարել:**

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ»
ՀՀ օրենսգիրք, հոդված 38

Հարց 266. 18 տարին լրացած անձի կողմից երեխային ոչ սթափ վիճակի հասցնելը՝

- **Առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:**

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ»
ՀՀ օրենսգիրք, հոդված 177

Հարց 267. Նշվածներից ո՞ր մարմնի որոշմամբ պետական կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ:

- **Միայն հիմնադրի:**

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» մասին
օրենք, հոդված 3, մաս 5

Հարց 268. Ինչի՞ իրավունք ունի պետական կազմակերպությունը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի նկատմամբ:

- **Օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու:**

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» մասին
օրենք, հոդված 4, մաս 2

Հարց 269. Պետական կազմակերպությունն իրեն ամրացված գույքը ո՞ր դեպքում կարող է պետության անունից հանձնել վարձակալության:

- **Եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ:**

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» մասին
օրենք, հոդված, 5, մաս 3

Հարց 270. Պետական կազմակերպության հիմնարկները, մասնաճյուղերը կամ ներկայացուցչությունները ստեղծվում են՝

- **Հիմնադրի որոշմամբ, իսկ հիմնադրի կողմից ուղղակիորեն նախատեսված դեպքում՝ լիազորված պետական մարմնի որոշմամբ:**

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» մասին
օրենք, հոդված 8, մաս 1

Հարց 271. Նշվածներից ո՞ր մարմինը կարող է հանդիսանալ պետական կազմակերպության հիմնադիր:

- **Միայն Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Կառավարության:**

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» մասին
օրենք, հոդված 9, մաս 2

Հարց 272. Լիազորված պետական մարմինը՝

- **Կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում պետական կազմակերպության գործադիր մարմնի կամ կոլեգիալ կառավարման մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները:**

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» մասին
օրենք, հոդված 14, մաս 2, ենթակետ գ

Հարց 273. Գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ՝

- **Եթե լրացել է նրա 65 տարին:**

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» մասին
օրենք, հոդված 16, մաս 3, ենթակետ բ

Հարց 274. Նշվածներից ո՞ր մարմինը իրավունք ունի հետ վերցնելու պետական կազմակերպությանն ամրացված գույքը:

- **Հիմնադիրը:**

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» մասին օրենք, հոդված 5, մաս 2

Հարց 275. Գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ, եթե՝

- Նա իր գործառույթներն իրականացնելիս պետական կազմակերպությանը կամ պետությանն իր մեղքով հասցրել է վնաս, որի գումարը գերազանցում է պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի մեկ տոկոսը:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» մասին օրենք, հոդված 16, մաս 3, ենթակետ է

Հարց 276. Ո՞րն է նախադպրոցական ուսումնական հաստատության գործունեության առարկան:

- Հաստատության գործունեության առարկան յուրաքանչյուր սանի կրթության կազմակերպումն է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու կամ նախադպրոցական ծառայություններ մատուցելու միջոցով:

«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն», կետ 13

Հարց 277. Ո՞րն է նախադպրոցական ուսումնական հաստատության գործունեության նպատակը:

- Յուրաքանչյուր սանի տարիքային և զարգացման առանձնահատկություններին համապատասխան՝ կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:

«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն», կետ 14

Հարց 278. Ինչի՞ վրա է հիմնվում նախադպրոցական ուսումնական հաստատության գործունեությունը:

- Ժողովրդավարության, մարդասիրության, ներառականության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն», կետ 17

Հարց 279. Նախադպրոցական ուսումնական հաստատության կրթական ծրագրերի ապահովման միջոցառումներում և ծառայություններում որպես անբաժանելի մաս կարող են ներառվել՝

- **Մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումները:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն», կետ 19

Հարց 280. Նախադպրոցական ուսումնական հաստատության կրթական ծրագրերի ապահովման միջոցառումներում և ծառայություններում որպես անբաժանելի մաս կարող են ներառվել՝

- **Սաների սննդի կազմակերպումը՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն», կետ 19

Հարց 281. Ձեռնարկատիրական գործունեության տեսակներից ո՞րը կարող է իրականացնել նախադպրոցական ուսումնական հաստատությունը:

- **Կազմակերպել սաների երկարօրյա կամ շուրջօրյա ուսուցում և խնամք:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն», կետ 20

Հարց 282. Ձեռնարկատիրական գործունեության տեսակներից ո՞րը կարող է իրականացնել նախադպրոցական ուսումնական հաստատությունը:

- **Կազմակերպել ճկուն ռեժիմով երեխային սպասարկելու ծառայություններ:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն», կետ 20

Հարց 283. Նշվածներից ո՞ր որոշումն է ընդունվում մանկավարժական խորհրդի կողմից.

- **օրվա կանոնակարգի և պարապմունքների բաշխման ցանկի, օգտագործվող ծրագրամեթոդական գրականության վերաբերյալ.**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն», կետ 60

Հարց 284. Տարիքային խմբերում երեխաների հարմարվողականության փուլի առանձնահատկությունները սահմանվում են՝

- **Կրթական ծրագրերով:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն», կետ 26

Հարց 285. Տարիքային խմբերում շաբաթական պարապմունքների բաշխման ցանկը սահմանվում է՝

- **Կրթական ծրագրերով:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն», կետ 26

Հարց 286. Հաստատության խմբերի առավելագույն խտությունը սահմանում է՝

- **Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն», կետ 25

Հարց 287. Տարիքային խմբերում ազատ տեղերը համալրվում են՝

- **Ամբողջ տարվա ընթացքում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն», կետ 27

Հարց 288. Ինչպիսի՞ խմբեր կարող են ձևավորվել հաստատությունում:

- **տարատարիք խմբեր՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն», կետ 28

Հարց 289. Հաստատության աշխատանքային ռեժիմը սահմանվում է՝

- **հիմնադրի, պետական և համայնքային հաստատությունների դեպքում՝ լիազորված պետական մարմնի որոշմամբ՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության

Հարց 290. Նշվածներից ո՞ր որոշումն է ընդունվում մանկավարժական խորհրդի կողմից.

- ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման տարբերակների վերաբերյալ.

«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն», կետ 60

Հարց 291. Ովքե՞ր են ընդգրկվում հաստատության ծնողական խորհրդի կազմում.

- Հաստատության ծնողական խորհուրդը կազմավորվում է տարիքային խմբերի ծնողական խորհուրդների նախագահներից:

«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն», կետ 61

Հարց 292. Ո՞վ է ղեկավարում նախադպրոցական ուսումնական հաստատության ընթացիկ գործունեությունը:

- Հաստատության տնօրենը:

«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն», կետ 44

Հարց 293. Հաստատության ծնողական խորհուրդը՝

- լսում է տնօրենի հաղորդումը հաստատության գործունեության վիճակի ու հեռանկարային ծրագրերի մասին:

«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն», կետ 67

Հարց 294. Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենը՝

- հաստատության մանկավարժական խորհրդի նախագահն է:

«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն», կետ 50

Հարց 295. Նշվածներից ո՞րն է նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենի աշխատանքային լիազորություն.

- որոշում է հաստատության գործունեության ռազմավարությունը, զարգացման նպատակներն ու խնդիրները, ընդունում որոշումներ այդ աշխատանքների ծրագրային պլանավորման համար.

«Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների անվանացանկ և պաշտոնների նկարագրեր», կետ 5

Հարց 296. Նշվածներից ո՞րն է նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենի աշխատանքային լիազորություն.

- **կազմում և համապատասխան լիազորված մարմնի հաստատմանն է ներկայացնում ուսումնական հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը.**

«Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների անվանացանկ և պաշտոնների նկարագրեր», կետ 5

Հարց 297. Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենի բացակայության դեպքում հիմնադրի գրավոր որոշման (հրամանի) համաձայն նրա լիազորություններն իրականացնում է՝

- **Մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), իսկ անհնարինության դեպքում՝ 5 տարվա նախադպրոցական մանկավարժական փորձ ունեցող մասնագետը:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն», կետ 45

Հարց 298. Նախադպրոցական ուսումնական հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝

- **Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն», կետ 85

Հարց 299. Նախադպրոցական ուսումնական հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներից են՝

- **Ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն», կետ 84

Հարց 300. Նախադպրոցական ուսումնական հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներից են՝

- **Բարեգործական, նպատակային ներդրումները, վարձավճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն», կետ 84

Հարց 301. Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստի՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալի որակավորման պահանջներն են՝

- պետք է ունենա՝ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի աշխատանքի առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:

« Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների անվանացանկ և պաշտոնների նկարագրեր », կետ 10

Հարց 302. Նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակը՝

- աշխատանք է տանում սաների վարքի շեղման, վնասակար սովորությունների վերացման համար.

« Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների անվանացանկ և պաշտոնների նկարագրեր », գլուխ 5 կետ 12

Հարց 303. Մանկավարժական աշխատողների ո՞ր մասն է ընդգրկվում մանկավարժական խորհրդի կազմում:

- Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են հաստատության բոլոր մանկավարժական աշխատողները:

«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն», կետ 49

Հարց 304. Նախադպրոցական ուսումնական հաստատությունում ուսումնադաստիարակչական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ի՞նչ խորհրդակցական մարմիններ են ձևավորվում:

- Մանկավարժական և ծնողական խորհուրդներ:

«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն», կետ 46

Հարց 305. Նշվածներից ո՞րն է նախադպրոցական ուսումնական հաստատության խորհրդակցական մարմին:

- Մանկավարժական խորհուրդը:

«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն», կետ 46

Հարց 306. Նշվածներից ո՞րն է նախադպրոցական ուսումնական հաստատության խորհրդակցական մարմին՝

- **Ծնողական խորհուրդը:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն», կետ 46

Հարց 307. Ե՞րբ է կազմավորվում նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական խորհուրդը:

- **օգոստոսի 20-ից 30-ը.**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն», կետ 47

Հարց 308. Նշված պաշտոններից ո՞րը ներառված չէ նախադպրոցական ուսումնական հաստատությունների վարչատնտեսական աշխատողների անվանացանկում.

- **մասնաճյուղի ղեկավար**

«Նախադպրոցական ուսումնական հաստատությունների վարչատնտեսական աշխատողների անվանացանկ և պաշտոնների նկարագրեր», Հավելված 2

Հարց 309. Ո՞վ է կրում նախադպրոցական ուսումնական հաստատության սեփականության պահպանման հոգսը:

- **Հաստատությունը:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն», կետ 71

Հարց 310. Պետական կամ համայնքային սեփականություն համարվող հաստատությունների շենքերը կարող են օտարվել միայն՝

- **Բացառիկ դեպքերում՝ կառավարության որոշմամբ:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն», կետ 75

Հարց 311. Նախադպրոցական ուսումնական հաստատության տարեկան աշխատանքային պլանը ներառում է տվյալ ուսումնական տարվա՝

- **ծնողական կրթության թեմաները (ժամանակացույց).**

«Նախադպրոցական ուսումնական հաստատություններում կրթական գործընթացի կազմակերպման համար գործածության ենթակա փաստաթղթերի վարելու կարգ», Հավելված 2 կետ 5-րդ, ենթակետ 5-րդ

Հարց 312. Ինչպե՞ս են կարգավորվում նախադպրոցական ուսումնական հաստատության և ծնողների (երեխայի օրինական ներկայացուցչի) փոխհարաբերությունները:

- **Նրանց միջև կնքված պայմանագրով:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն», կետ 37

Հարց 313. Նախադպրոցական ուսումնական հաստատության տարեկան աշխատանքային պլանը ներառում է տվյալ ուսումնական տարվա՝

- **ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարողականի վերաբերյալ եռամսյակային հաշվետվությունը:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատություններում կրթական գործընթացի կազմակերպման համար գործածության ենթակա փաստաթղթերի վարելու կարգ»,
Հավելված 2 կետ 5-րդ, ենթակետ 5-րդ

Հարց 314. Հաստատությանը պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորումն իրականացնելու նպատակով հաստատության կառավարումն իրականացնող լիազոր մարմինը հավաքագրում և բյուջետային հայտ կազմելու նպատակով համապատասխան տեղեկատվությունը ո՞ր մարմնին է ներկայացնում:

- **Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար նպատակային ֆինանսավորման չափաքանակը», կետ 3

Հարց 315. Մեկ սանի հաշվարկով նախադպրոցական ուսումնական հաստատության ֆինանսավորումը պետական բյուջեից ո՞ր խմբերի սաների համար է իրականացվում:

- **Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար նպատակային ֆինանսավորման չափաքանակը», Հավելված կետ 2

Հարց 316. Երբ վանի՞ց է իրականացվում նախադպրոցական ուսումնական հաստատության ֆինանսավորումը պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար:

- **2022 թվականի սեպտեմբերի 1-ից:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար նպատակային ֆինանսավորման չափաքանակը», Հավելված կետ 2

Հարց 317. Երբ վանի՞ց է իրականացվում նախադպրոցական ուսումնական հաստատության ֆինանսավորումը պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված սոցիալապես անապահով կամ «Պետական նպաստների մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված կարգով ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափն անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 160 տոկոսի արժեքից ցածր ամսական եկամուտ ունեցող և ընտանիքի անապահովության գնահատման կարգով սոցիալապես անապահով ճանաչված, անապահովության սահմանային միավորից՝ 28-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքների երեխաների համար:

- **2026 թվականի սեպտեմբերի 1-ից:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար նպատակային ֆինանսավորման չափաքանակը», կետ 2

Հարց 318. Ո՞ր մարմինն է իրականացնում նախադպրոցական ուսումնական հաստատության գործունեության ներքին գնահատումը:

- **Ուսումնական հաստատությունը:**

«Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշներն ու իրականացման կարգ», կետ 2

Հարց 319. Ինչի՞ հիման վրա է գնահատող կազմակերպությունն ուսումնական հաստատությանը տալիս հավաստագիր:

- **Արտաքին գնահատման դրական արդյունքների:**

«Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշներն ու իրականացման կարգ», կետ 5

Հարց 320. Ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման նպատակն է՝

- Շահառուների՝ սաների և նրանց ծնողների (օրինական ներկայացուցիչների), հաստատության մանկավարժական աշխատողների, նախարարության, տարածքային կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, Երևանի քաղաքապետարանի, կրթության հարցերով զբաղվող կազմակերպությունների, գործատուների շրջանում հաստատության գործունեության վերաբերյալ իրազեկվածության աստիճանի բարձրացումը:

«Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշներն ու իրականացման կարգ», կետ 9

Հարց 321. Ներքին գնահատումն ուսումնական հաստատության կողմից՝

- Իր գործունեության վերլուծությունն է:

«Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշներն ու իրականացման կարգ», կետ 11

Հարց 322. Նախադպրոցական ուսումնական հաստատության ներքին և արտաքին գնահատումն իրականացվում է՝

- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության սահմանած հարցաշարերի հիման վրա:

«Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշներն ու իրականացման կարգ», կետ 8

Հարց 323. Ինչը՝ կարող է հիմք հանդիսանալ նախադպրոցական ուսումնական հաստատության արտաքին գնահատման իրականացման համար:

- Կրթության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքները:

«Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշներն ու իրականացման կարգ», կետ 21

Հարց 324. Նախադպրոցական ուսումնական հաստատության արտաքին գնահատումն իրականացվում է՝

- **Ուսումնական հաստատության ֆինանսական միջոցների հաշվին:**

«Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշներն ու իրականացման կարգ», կետ 31

Հարց 325. Որտե՞ղ է հրապարակվում նախադպրոցական ուսումնական հաստատության արտաքին գնահատում անցած ուսումնական հաստատությունների վերաբերյալ գնահատող կազմակերպության ներկայացրած հաշվետվությունը:

- **Հիմնադրի կայքում:**

«Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշներն ու իրականացման կարգ», կետ 37

Հարց 326. Ե՞րբ և ո՞ւմ կողմից է հաստատվում նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստի տարեկան աշխատանքային պլանը.

- **հաստատվում է հաստատության տնօրենի կողմից՝ օգոստոսի 25-ից 30-ը.**

«Նախադպրոցական ուսումնական հաստատություններում կրթական գործընթացի կազմակերպման համար գործածության ենթակա փաստաթղթերի վարելու կարգ», կետ 7

Հարց 327. Մանկավարժական աշխատողների կողմից իրականացվող ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանում ներառվում են՝

- **սաների զարգացման ընթացքի դիտարկման և գնահատման թերթիկները.**

«Նախադպրոցական ուսումնական հաստատություններում կրթական գործընթացի կազմակերպման համար գործածության ենթակա փաստաթղթերի վարելու կարգ», կետ 10

Հարց 328. Մանկավարժական աշխատողների կողմից իրականացվող ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանում ներառվում է՝

- **ընտանիքի հետ համագործակցության գործիքակազմը (թեմաներ, ժամանակացույց, արձանագրություն).**

«Նախադպրոցական ուսումնական հաստատություններում կրթական գործընթացի կազմակերպման համար գործածության ենթակա փաստաթղթերի վարելու կարգ», կետ 10

Հարց 329. Ե՞րբ է սկսվում նախադպրոցական ուսումնական հաստատության աշխատողի անձնական գործի վարումը.

- **Գործի վարումը սկսվում է աշխատողի՝ համապատասխան պաշտոնում նշանակվելու մասին իրավական ակտի ուժի մեջ մտնելուց հետո:**

«Նախադպրոցական ուսումնական հաստատություններում կրթական գործընթացի կազմակերպման համար գործածության ենթակա փաստաթղթերի վարելու կարգ», կետ 28

Հարց 330. Ի՞նչ է ուսուցման մեթոդը:

- **Մանկավարժի և սովորողի ուսուցման նպատակներին ուղղված և որոշակիորեն կարգավորված գործունեություն:**

գլ. 2, Արնաուդյան Ա., Գյուլբուդադյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ./ Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար/ - Եր.: Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2004.- 180 էջ

Հարց 331. Նշվածներից ո՞րն է զննական մեթոդ:

- **Էքսկուրսիա:**

գլ. V, Ղույումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Եկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: Զանգակ-97, 2005թ., 464 էջ

Հարց 332. Նշվածներից ո՞րն է զննական մեթոդ:

- **Ցուցադրում:**

գլ. V, Ղույումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Եկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: Զանգակ-97, 2005թ., 464 էջ

Հարց 333. Նշվածներից ո՞րն է զննական մեթոդ:

- **Դիտում**

գլ. V, Ղույումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Եկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: Զանգակ-97, 2005թ., 464 էջ

Հարց 334. Նշվածներից ո՞րն է խոսքային մեթոդ:

- **Զրույց:**

գլ. V, Ղույումչյան Գ. Ե. /Մանկավարժություն:

Հարց 335. Նշվածներից ո՞րն է գործնական մեթոդ:

- **Ճանաչողական խաղեր:**

գլ. V, Ղույումչյան Գ. Ե. /Մանկավարժություն:
Դասագիրք բուհերի համար: Եկու գրքով:
Գիրք I, Գիրք II /- Եր.: Զանգակ-97, 2005թ., 464 էջ

Հարց 336. Ո՞ր խմբերը կարելի է համարել համագործակցային:

- **Այն խմբերը, որի անդամները գիտակցում են, որ իրենց հաջողությունը կախված է խմբի բոլոր անդամների ներդրումից:**

գլ. 1, Արնաուդյան Ա., Գյուլբուդայան Ա., Խաչատրյան Ս.,
Խրիմյան Ս., Պետրոսյան Մ./
Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար/ -Եր.: Կրթության
ազգային ինստիտուտի հրատ., 2004.- 180 էջ

Հարց 337. Ի՞նչ ենք հասկանում «ակտիվ ուսումնառություն» ասելով:

- **Ակտիվ ուսումնառության ընթացքում սովորողները սուսկ խոսքով կամ տեսողական տեղեկատվություն ստանալու փոխարեն դառնում են և՛ մասնակից, և՛ կատարող:**

Բաժին 1, Խրիմյան Ս., Հովսեփյան Ա., Մելքոնյան Մ., Էլոյան Ն., Շահրոքի Ֆ.
/Դպրոցի ղեկավարում և կառավարում: Ձեռնարկ դպրոցի տնօրենների համար,
ԱՅՌԵՔՍ, Երևան, 2003թ., 296 էջ

Հարց 338. Ի՞նչ ենք հասկանում «ուսուցում» ասելով:

- **Կրթական ծրագրով իրականացվող գործընթաց, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն նպատակաուղղված է անձի ուսումնառության կազմակերպմանը, իրականացմանը կամ դրա օժանդակմանը:**

«Կրթության մասին» օրենք, հոդված 3

Հարց 339. Ի՞նչ ենք հասկանում «կարողություն» ասելով՝

- **Կարողությունները գիտելիքներն են՝ գործողության մեջ:**

գլ. I, Ղույումչյան Գ. Ե. /Մանկավարժություն:
Դասագիրք բուհերի համար: Եկու գրքով:
Գիրք I, Գիրք II /- Եր.: Զանգակ-97, 2005թ., 464 էջ

Հարց 340. Ի՞նչ ենք հասկանում «հմտություն» ասելով:

- Հմտությունները կարողությունների կառուցվածքում ձևավորված գործունեության առանձին դրսևորումների ավտոմատացված տարրերն են:

գլ. I, Ղույունչյան Գ. Ե. /Մանկավարժություն:

Դասագիրք բուհերի համար: Եկու գրքով:

Գիրք I, Գիրք II /- Եր.: Զանգակ-97, 2005թ., 464 էջ

Հարց 341. Նշվածներից ո՞րն է դաստիարակության մեթոդ:

- Դրական օրինակի մեթոդը:

Ղույունչյան Գ. Ե. /Մանկավարժություն:

Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով:

Գիրք II , /- Եր.: Զանգակ-97, 2005թ., գլ. IV, 232 էջ

Հարց 342. Հուզական բռնության ձև է՝

- Ծաղրը, մականուններ կպցնելը, անվերջ նկատողությունները, ոչ օբյեկտիվ գնահատականները, ստորացումն այլ երեխաների ներկայությամբ և այլն:

Մարինե Միքայելյան, Բռնության և զոհի հոգեբանություն,
ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Ճարտարագետ, 2016

Հարց 343. Ո՞րն է կառավարման համակարգի վրա ազդող ամենաբացասական գործոնը:

- Նպատակի սխալ ընտրությունը:

Бандурка А. М., Бочарова С. П., Землянская Е. В.,

“Психология управления”. Харьков, 1998г.

Հարց 344. Ղեկավարման ավտորիտար ոճն առավելապես ի՞նչ իրավիճակներում է նպատակահարմար:

- Ռազմական:

Гл.6, 8 Бандурка А. М., Бочарова С. П., Землянская Е. В.,

“Психология управления”. Харьков, 1998г

Հարց 345. Ի՞նչ հիմնական հարցերի է կոչված պատասխանելու դիդակտիկան՝

- Ի՞նչ սովորեցնել և ինչպե՞ս սովորեցնել հարցերին:

Բաժին 2, Ղույունչյան Գ. Ե. /Մանկավարժություն:

Հարց 346. Աշխատակիցների հետ հաստատության տնօրենի հարաբերություններում ո՞ր ոճին պետք է տալ նախապատվություն:

- **Ժողովրդավարական ոճին:**

(Бандурка А. М., Бочарова С. П., Землянская Е. В.,
“Психология управления”. Харьков, 1998г.)

Հարց 347. Նշվածներից ո՞րն է կրթության բովանդակային բաղադրիչներից:

- **Արժեքային համակարգը:**

(Бандурка А. М., Бочарова С. П., Землянская Е. В.,
“Психология управления”. Харьков, 1998г.)

Հարց 348. Մանկապարտեզում իրականացվող մեթոդական աշխատանքի նպատակ է՝

- **Նախադպրոցականների ուսուցման և դաստիարակության առավել ուսցիոնալ մեթոդների և հնարների յուրացումը, տիրապետումը:**

Հ. Միտոյան, Լ. Սմբատյան /«Ուսումնական ձեռնարկ
մանկապարտեզի համար» Երևան 2010

Հարց 349. Մանկապարտեզում իրականացվող մեթոդական աշխատանքի նպատակ է՝

- **Մանկավարժական կոլեկտիվում միմյանց աշխատանքային փորձի փոխանակումը:**

Հ. Միտոյան, Լ. Սմբատյան /«Ուսումնական ձեռնարկ
մանկապարտեզի համար» Երևան 2010

Հարց 350. Մանկապարտեզում իրականացվող մեթոդական աշխատանքի նպատակ է՝

- **Կրթադաստիարակչական գործընթացի որակի բարձրացումը, մանկավարժների տեսական և փորձարարական, վերլուծական ունակությունների զարգացումը:**

Հ. Միտոյան, Լ. Սմբատյան /«Ուսումնական ձեռնարկ
մանկապարտեզի համար» Երևան 2010

Հարց 351. Ի՞նչ սկզբունքով է կազմակերպվում մանկավարժական գործընթացը նախադպրոցական կրթական հաստատություններում:

- **Երեխայի զարգացման առաջատար գործունեության հնարավորությունների առավելագույն օգտագործման:**

Ս. Մարության, Ա. Դալլաքյան /«Նախադպրոցական մանկավարժություն» Բուհական դասագիրք. Երևան 2008թ.

Հարց 352. Ո՞րն է ժամանակակից նախադպրոցական դիդակտիկայում կիրառվող սկզբունք:

- **Զարգացնող ուսուցման սկզբունքը:**

Ս. Մարության, Ա. Դալլաքյան /«Նախադպրոցական մանկավարժություն» Բուհական դասագիրք. Երևան 2008թ.

Հարց 353. Ո՞րն է ժամանակակից նախադպրոցական դիդակտիկայում կիրառվող սկզբունք:

- **Դաստիարակող ուսուցման սկզբունքը:**

Ս. Մարության, Ա. Դալլաքյան /«Նախադպրոցական մանկավարժություն» Բուհական դասագիրք. Երևան 2008թ.

Հարց 354. Ո՞ր սոցիալական օղակում է սկիզբ առնում երեխայի սոցիալական էությունը:

- **Ընտանիքում:**

Ս. Մարության, Ա. Դալլաքյան /«Նախադպրոցական մանկավարժություն» Բուհական դասագիրք. Երևան 2008թ.

Հարց 355. Ո՞րն է երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքների պլանավորման սկզբունք:

- **Ապահովել դաստիարակության, ուսուցման և զարգացման գործընթացի փոխադարձ կապը:**

Հ. Միտոյան /«Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար» Երևան 2020

Հարց 356. Ո՞րն է երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքների պլանավորման սկզբունք:

- **Հաշվի առնել երեխաների զարգացման մակարդակը, դիտարկման արդյունքները օգտագործել կրթական գործընթացի օպտիմալացման, անհատական աշխատանքի պլանավորման ժամանակ:**

Հ. Միտոյան /«Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար» Երևան 2020

Հարց 357. Ո՞ր առանձնահատկությունները պետք է հաշվի առնել տարատարիք խմբում կրթադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ժամանակ:

- Հստակորեն տարբերակել ծրագրային խնդիրները՝ շերտավորելով յուրաքանչյուր ենթախմբի համար՝ որոշակի առաջադրանքների կատարման միջոցներով:

Հ. Միտոյան /«Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար» Երևան 2020

Հարց 358. Ո՞րն է նախադպրոցական անբաժանելի մաս կազմող նախադպրոցականի դաստիարակության մեթոդիկա:

- **Երեխայի խոսքի զարգացման տեսությունը և մեթոդիկան:**

Ս. Մարության, Ա. Դալլաքյան /«Նախադպրոցական մանկավարժություն» Բուհական դասագիրք. Երևան 2008թ.

Հարց 359. Ի՞նչ է բարոյական դաստիարակությունը:

- **Երեխային համամարդկային և սոցիալական արժեքներին հաղորդակից դարձնելու նպատակաուղղված գործընթաց:**

Ս. Մարության, Ա. Դալլաքյան /«Նախադպրոցական մանկավարժություն» Բուհական դասագիրք. Երևան 2008թ.

Հարց 360. Ո՞րն է խմբային համագործակցային աշխատանքի առավելություն:

- **Մյուսների նկատմամբ հանդուրժողականությունը և հարգանքը:**

Ռ. Ծառուկյան, Լ. Սմբատյան և ուրիշներ / «3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպումն այլընտրանքային մոդելներով» Երևան 2018/

Հարց 361. Ի՞նչն է ընկած արդյունավետ համագործակցության հիմքում:

- **Աշխատանքի անհատականացված բաժանումը և փոխադարձ պատասխանատվությունը:**

Ռ. Ծառուկյան, Լ. Սմբատյան և ուրիշներ / «3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպումն այլընտրանքային մոդելներով» Երևան 2018/

Հարց 362. Ի՞նչ է իր մեջ ներառում մանկավարժական գնահատումը:

- **Տեղեկատվության, փաստերի հավաքագրում:**

